ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի որոշում
Հակակոռուպցիոն քաղաքացիական գործ թիվ ՀԿԴ/0067/02/23
Նախագահող դատավոր՝ Հ. Շահնազարյան
Դատավորներ՝ Դ. Հովհաննիսյան
Ա. Ոսկանյան

Հակակոռուպցիոն քաղաքացիական գործ թիվ **ՀԿԴ/0067/02/23**
2026թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով

նախագահող Ա. ԴԱՎԹՅԱՆ
զեկուցող Գ. ԳՅՈՋԱԼՅԱՆ
Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ա. ԿՈՒՐԵՒՅԱՆ
Լ. ՄԵԼԻՔՋԱՆՅԱՆ

«11» նոյեմբերի 2026թ. քաղաք Երևան

գրավոր ընթացակարգով քննելով ըստ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության (այսուհետ նաև՝ Դատախազություն կամ Բողոքաբեր) հայցի ընդդեմ Սաշա Ժորայի Հակոբյանի, Լիանա Վազգենի Հակոբյանի, Հովհաննես Սաշայի Հակոբյանի, Արաքսյա Հովհաննեսի Ավջյանի, Կարապետ Գրիշայի Հակոբյանի, Մկրտիչ Գրիշայի Հակոբյանի, Անդրանիկ Սաշայի Հակոբյանի (այսուհետ նաև՝ Պատասխանողներ), վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք՝ «Սարանդ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ «Սարանդ» ՍՊԸ), Արմեն Սարգսի Սարգսյանի, Քրիստինե Աշոտի

Զաքարյանի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի մասին, հակակոռուպցիոն քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի 07.10.2025 թվականի որոշման դեմ Դատախազության կողմից բերված վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1.1. 15.03.2023 թվականին Դատախազությունը հայցադիմում է ներկայացրել ՀՀ հակակոռուպցիոն դատարան (այսուհետ նաև՝ Դատարան) ընդդեմ Սաշա Ժորայի Հակոբյանի, Լիանա Վազգենի Հակոբյանի, Հովհաննես Սաշայի Հակոբյանի, Արաքսյա Հովհաննեսի Ավջյանի և Կարապետ Գրիշայի Հակոբյանի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի մասին:

1.2. 28.03.2023 թվականի որոշմամբ Դատարանը (դատավոր՝ Լ. Դրմեյան) հայցադիմումն ընդունել է վարույթ:

1.3. 06.09.2023 թվականին Դատարանը «Սարանդ» ՍՊԸ-ին, Արմեն Սարգսի Սարգսյանին և Քրիստինե Աշոտի Զաքարյանին ներգրավել է պատասխանող կողմում վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք:

1.4. 22.10.2024 թվականի նախնական դատական նիստում Դատախազությունը ներկայացրել է հայցի հիմքի և առարկայի փոփոխություն թույլատրելու և նոր պատասխանողներ ներգրավելու մասին միջնորդություններ:

1.5. 08.11.2024 թվականին Դատարանը թույլատրել է հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը:

1.6. 11.11.2024 թվականին Դատարանը Մկրտիչ Գրիշայի Հակոբյանին և Անդրանիկ Սաշայի Հակոբյանին ներգրավել է որպես նոր պատասխանողներ:

1.7. 26.12.2024 թվականի նախնական դատական նիստում Սաշա Ժորայի Հակոբյանը (ներկայացուցիչ՝ Վ. Գրիգորյան) ներկայացրել է հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ միջնորդություն:

1.8. 29.01.2025 թվականին Դատարանը կայացրել է վճիռ, որով Սաշա Հակոբյանի ներկայացրած միջնորդությունը՝ հայցային վաղեմություն կիրառելու մասին, բավարարել է մասնակիորեն: Դատարանը վճռել է. «(...) *1.1. ՀՀ գլխավոր դատախազության հայցն ընդդեմ Մկրտիչ Գրիշայի Հակոբյանի՝ հօգուտ Հայաստանի Հանրապետության որպես ապօրինի ծագում ունեցող գույք ▪. ▪▪▪▪▪, ▪-▪▪ ▪▪▪▪▪, ▪▪▪ ▪▪[1] հասցեի անշարժ գույքն ամբողջութամբ, իսկ դրա անհնարինության դեպքում միջին շուկայական արժեքը՝ 26.210.000 ՀՀ դրամ, բռնագանձելու պահանջի մասին, մերժել՝ հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով,*

1.2. ՀՀ գլխավոր դատախազության հայցն ընդդեմ Անդրանիկ Սաշայի Հակոբյանի՝ հօգուտ Հայաստանի Հանրապետության որպես ապօրինի ծագում ունեցող գույք ▪. ▪▪▪▪▪,

[1] Հանդիսանում է անձնական տվյալ:

▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪ ▪▪▪., ▪▪▪ ▪▪▪▪▪▪▪▪ ▪▪▪ ▪▪[2] *անշարժ գույքի Անդրանիկ Հակոբյանի բաժինն ամբողջությամբ, իսկ անհնարինության դեպքում միջին շուկայական արժեքը բռնագանձելու պահանջի մասին, մերժել՝ հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով:* (...)»:

1.9. 29.01.2025 թվականին Դատարանը որոշել է. «*Թիվ ՀԿԴ/0067/02/23 հակակոռուպցիոն քաղաքացիական գործից առանձին վարույթում առանձնացնել ՀՀ գլխավոր դատախազության պահանջներն ընդդեմ Սաշա Ժորայի Հակոբյանի, Լիանա Վազգենի Հակոբյանի, Հովհաննես Սաշայի Հակոբյանի, Արաքսյա Հովհաննեսի Ավջյանի, Կարապետ Գրիշայի Հակոբյանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք «Սարանդ» ՍՊ ընկերության, Արմեն Սարգսի Սարգսյանի և Քրիստինե Աշոտի Զաքարյանի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջների մասին*»:

1.10. 07.02.2025 թվականին Բողոքաբերը ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը 27.02.2025 թվականին ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) ընդունել է վարույթ:

1.11. 05.08.2025 թվականին Վերաքննիչ դատարանը դիմել է Սահմանադրական դատարան՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի 8-րդ հոդվածի, դրա հետ փոխկապակցված 20-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ, և կասեցրել է թիվ ՀԿԴ/0067/02/23 հակակոռուպցիոն քաղաքացիական գործի վարույթը՝ մինչև Սահմանադրական դատարանի կողմից վերջնական որոշում կայացնելը:

1.12. 05.09.2025 թվականին Սահմանադրական դատարանը ՍԴԱՈ-135 աշխատակարգային որոշմամբ որոշել է. «Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դիմումի հիման վրա՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի 8-րդ հոդվածի, դրա հետ փոխկապակցված 20-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

1.13. 16.09.2025 թվականի որոշմամբ Վերաքննիչ դատարանը վերսկսել է գործի վարույթը:

1.14. 07.10.2025 թվականին Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակի: Վերաքննիչ դատարանը որոշել է. «*1.1. Վճիռը՝ «Թիվ ՀԿԴ/0067/02/23 գործով պատասխանող Սաշա Հակոբյանի կողմից ներկայացված միջնորդությունը՝ հայցային վաղեմություն կիրառելու մասին, բավարարել մասնակիորեն. 1.1. Թիվ ՀԿԴ/0067/02/23 գործով ՀՀ գլխավոր դատախազության հայցն ընդդեմ Մկրտիչ Գրիշայի Հակոբյանի՝ հօգուտ Հայաստանի Հանրապետության որպես ապօրինի ծագում ունեցող գույք ▪. ▪▪▪▪▪, ▪-▪▪ ▪▪▪▪▪, ▪▪▪ ▪▪[3] հասցեի անշարժ գույքն ամբողջությամբ, իսկ դրա անհնարինության դեպքում միջին շուկայական արժեքը՝ 26.210.000 ՀՀ դրամ, բռնագանձելու պահանջի*

[2] Հանդիսանում է անձնական տվյալ:
[3] Հանդիսանում է անձնական տվյալ:

մասին, մերժել՝ հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով» մասով բեկանել և այդ մասով գործն ուղարկել նոր քննության:

1.2. Վճիռը՝ «Թիվ ՀԿԴ/0067/02/23 գործով պատասխանող Սաշա Հակոբյանի կողմից ներկայացված միջնորդությունը՝ հայցային վաղեմություն կիրառելու մասին, բավարարել մասնակիորեն. 1.2. ՀՀ գլխավոր դատախազության հայցն ընդդեմ Անդրանիկ Սաշայի Հակոբյանի՝ հօգուտ Հայաստանի Հանրապետության որպես ապօրինի ծագում ունեցող գույք ▪. ▪▪▪▪▪, ▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪ ▪▪▪., ▪▪▪ ▪▪▪▪▪▪▪▪ ▪▪▪ ▪▪[4] անշարժ գույքի Անդրանիկ Հակոբյանի բաժինն ամբողջությամբ, իսկ անհնարինության դեպքում միջին շուկայական արժեքը բռնագանձելու պահանջի մասին, մերժել՝ հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով» մասով թողնել անփոփոխ: (...)»:

1.15. 08.12.2025 թվականին Բողոքաբերը ներկայացրել է վճռաբեկ բողոք:

1.16. 18.12.2025 թվականին գործը հանձնվել է Վճռաբեկ դատարանի աշխատակազմին:

1.17. 18.02.2026 թվականի որոշմամբ Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

1.18. Պատասխանողները վճռաբեկ բողոքի պատասխաններ չեն ներկայացրել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

2.1. Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 8-րդ հոդվածը, 20-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին մասը, որը պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 11-րդ ու 12-րդ հոդվածները:

Բողոքաբերը բողոքում ներկայացրել է հետևյալ փաստարկները.

2.2. Օրենքն ուսումնասիրության համար Իրավասու մարմնին տրված եռամյա ժամկետը չի դիտարկել որպես հայցային վաղեմության ժամկետ, այլ սահմանել է, որ այդ ժամկետի բացթողումով ներկայացված հայցը համարվում է հայցային վաղեմության ժամկետի բացթողումով ներկայացված: Այլ կերպ ասած՝ եռամյա ժամկետը հայցային վաղեմության ժամկետ չէ, դրա բացթողնման հետևանքը պարզապես հավասարեցվում է հայցային վաղեմության ժամկետի բացթողնման հետևանքին: Օրենսդրի կողմից նման կարգավորում նախատեսելը բխել է այն հանգամանքից, որ Իրավասու մարմնի կողմից ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարաբերությունների շրջանակներում ներկայացվող հայցադիմումը ներկայացվում է պետական շահերի պաշտպանության նպատակով, այլ ոչ՝ խախտված իրավունքի վերականգնման:

2.3. Օրենքի 8-րդ հոդվածի գործող խմբագրությունը վկայում է այն մասին, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարաբերություններում հայցային

[4] Հանդիսանում է անձնական տվյալ:

վաղեմության ժամկետն իր դասական իմաստով չի գործում: Սակայն օրենսդիրը, Իրավասու մարմնին կաշկանդելու նպատակով, սահմանել է հայցի ներկայացման ժամկետ՝ հավասար ուսումնասիրության ժամկետին՝ նշելով, որ եթե Իրավասու մարմնի կողմից այս ժամկետը չպահպանվի, ապա ներկայացված հայցը կունենա նույն կարգավիճակը, ինչ հայցային վաղեմության ժամկետի բացթողումով ներկայացված հայցը: Այսինքն՝ օրենսդիրն Օրենքի 8-րդ հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ հայցադիմումի ներկայացման հետևանքները հավասարեցրել է հայցային վաղեմության ժամկետի խախտմամբ ներկայացված բացասական հետևանքներին:

2.4. Իրավասու մարմնի կողմից եռամյա ժամկետում պատշաճ հայցի հարուցման պայմաններում հայցային վաղեմության ժամկետների խախտման հետևանքներն առհասարակ քննարկման ենթակա չեն: Այն դեպքերում, երբ Իրավասու մարմինն ուսումնասիրության համար սահմանված ժամկետում պատշաճ հայց հարուցելուց հետո հայցի առարկան և (կամ) հիմքը փոփոխելու միջոցով ներկայացնում է հայցադիմումի մեջ չներառված նոր պահանջ, ապա այդ պահանջի նկատմամբ չեն տարածվում հայցային վաղեմության կանոնները, քանի որ օրենսդիրը նման կարգավորում չի նախատեսել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների նկատմամբ:

2.5. Վերաքննիչ դատարանի Օրենքի 8-րդ հոդվածին տված մեկնաբանության պայմաններում ստացվում է, որ Իրավասու մարմինը պետք է եռամյա ժամկետում կատարի ուսումնասիրություն, ներկայացնի հայց և անհրաժեշտության դեպքում այդ նույն ժամկետում իրականացնի ուսումնասիրությունը, ներկայացնի հայցը և, անհրաժեշտության դեպքում, փոփոխի հայցի հիմքը և (կամ) առարկան, հակառակ դեպքում կհամարվի, որ նշված գործողությունները կատարվել են հայցային վաղեմության ժամկետի խախտմամբ: Վերաքննիչ դատարանի մեկնաբանությունը չի բխում Օրենսգրքի 170-րդ հոդվածի տառացի մեկնաբանությունից, քանի որ որևէ օրենսդրական կարգավորում չի սահմանափակում հայցվորի իրավունքը՝ փոփոխել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով հայցի հիմքը և առարկան:

2.6. Այնուամենայնիվ, եթե անգամ համարվի, որ նշված հարաբերությունների նկատմամբ կիրառելի է հայցային վաղեմության ժամկետները, ապա դրանք կարող են հաշվարկվել միայն ուսումնասիրության ընթացքում կազմված եզրակացությունից սկսած, որպիսի դիրքորոշում արտահայտել է նաև Վերաքննիչ դատարանը՝ թիվ ՀԿԴ/0110/02/24 հակակոռուպցիոն քաղաքացիական գործով 08.05.2025 թվականին կայացրած, օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, մինչդեռ սույն գործով Վերաքննիչ դատարանի արտահայտած դիրքորոշումն այն է, որ հայցային վաղեմության ժամկետը հոսում է ուսումնասիրություն սկսելու մասին որոշում կայացնելու պահից:

2.7. Ամփոփելով վերոգրյալը՝ Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը՝ այն դիտարկելով որպես հայցային վաղեմության ժամկետ, սխալ է մեկնաբանել նաև Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասը և չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին մասը, որը պետք է կիրառեր, որպես հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման սկիզբ դիտարկել է ուսումնասիրություն սկսելու մասին որոշման կայացման պահն ու չի քննարկել իրավունքի

խախտման պահը: Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել Օրենսգրքի 170-րդ հոդվածը և Օրենքի 8-րդ հոդվածը համակցության մեջ՝ հանգելով հետևության, որ եռամյա ժամկետի ավարտից հետո Իրավասու մարմնի ներկայացրած հայցի հիմքի ու առարկայի փոփոխությունը, բացի թույլատրելիության ընդհանուր ստանդարտից, պետք է նաև ենթարկվի Օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված հայցային վաղեմության ժամկետի ազդեցությանը: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը սահմանափակել է Իրավասու մարմնի՝ ուսումնասիրություն իրականացնելու եռամյա ժամկետը:

2.8. Վերոգրյալի հիման վրա՝ Բողոքաբերը պահանջել է. «Բավարարել վճռաբեկ բողոքը և մասնակի բեկանել ու փոփոխել ստորադաս դատարանի ակտը կամ մասնակի բեկանել ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի թիվ ՀԿԴ/0067/02/23 գործով 2025 հոկտեմբերի 07-ին կայացված որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը»:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

3.1. 08.10.2020 թվականին ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում Սաշա Ժորայի Հակոբյանին պատկանող գույքի առնչությամբ սկսվել է թիվ 22-92-20 ուսումնասիրությունը, որով ուսումնասիրվող ժամանակահատված է սահմանվել որոշմանը նախորդող տասը տարին, ինչպես նաև մինչև ուսումնասիրության ավարտն ընկած ժամանակահատվածը (հատոր 2-րդ, գ.թ. 14-16):

3.2. 09.09.2022 թվականին ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը թիվ 22-92-20 ուսումնասիրությամբ կայացրել է ուսումնասիրվող նոր ժամանակահատված սահմանելու վերաբերյալ որոշում, որով սահմանվել է ուսումնասիրվող նոր ժամանակահատված՝ 23.07.1996 թվականից մինչև ուսումնասիրության ավարտն ընկած ժամանակահատվածը (հատոր 4-րդ, գ.թ. 22-24):

3.3. 12.09.2022 թվականին ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը կազմել է ուսումնասիրության նախնական արդյունքների վերաբերյալ ամփոփագիր (հատոր 4-րդ, գ.թ. 7-21):

3.4. 14.03.2023 թվականին ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը վերջնական ամփոփել է ուսումնասիրության արդյունքները և որոշել է հայց ներկայացնել Դատարան: Ուսումնասիրության արդյունքների վերջնական ամփոփման վերաբերյալ եզրակացությամբ ուսումնասիրության առարկա դարձած ▪▪▪▪▪▪▪ ▪▪▪▪, ▪▪▪▪▪ ▪▪▪▪▪, ▪▪▪ ▪▪▪▪▪▪▪, ▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪ ▪▪▪▪▪, ▪▪▪ ▪▪[5] հասցեում գտնվող անշարժ գույքը դիտարկվել է որպես օրինական գույք (հատոր 6-րդ, գ.թ. 73-114):

[5] Հանդիսանում է անձնական տվյալ:

3.5. 15.03.2023 թվականին Դատախազությունը հայցադիմում է ներկայացրել Դատարան, որով ▪▪▪▪▪▪▪ ▪▪▪▪, ▪▪▪▪▪ ▪▪▪▪▪, ▪▪▪ ▪▪▪▪▪▪▪, ▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪ ▪▪▪▪▪, ▪▪▪ ▪▪[6] հասցեում գտնվող անշարժ գույքի վերաբերյալ նյութաիրավական պահանջ չի ներկայացրել (հատոր 1-ին, գ.թ. 3-50):

3.6. 22.10.2024 թվականի նախնական դատական նիստում Դատախազությունը ներկայացրել է հայցի հիմքի և առարկայի փոփոխություն թույլատրելու ու նոր պատասխանողներ ներգրավելու մասին միջնորդություններ, որով, ի թիվս այլնի, հայցի առարկան լրացրել է նաև ▪▪▪▪▪▪▪ ▪▪▪▪, ▪▪▪▪▪ ▪▪▪▪▪, ▪▪▪ ▪▪▪▪▪▪▪, ▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪ ▪▪▪▪▪, ▪▪▪ ▪▪ [7] հասցեում գտնվող անշարժ գույքի Անդրանիկ Սաշայի Հակոբյանի մասն ամբողջությամբ, իսկ անհնարինության դեպքում միջին շուկայական արժեքը բռնագանձելու պահանջով (հատոր 12-րդ, գ.թ. 5-40):

3.7. 26.12.2024 թվականի նախնական դատական նիստում Սաշա Ժորայի Հակոբյանը (ներկայացուցիչ՝ Վ. Գրիգորյան) ներկայացրել է հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ միջնորդություն (հատոր 13-րդ, գ.թ. 18-21):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

4.1. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է Օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ Օրենքի 8-րդ հոդվածի և 20-րդ հոդվածի 3-րդ մասի միատեսակ կիրառության համար, քանի որ մեկ այլ գործով ստորադաս դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտում Օրենքի 8-րդ հոդվածը և 20-րդ հոդվածի 3-րդ մասը կիրառվել են հակասող մեկնաբանությամբ:

Սույն բողոքի քննության շրջանակներում, հաշվի առնելով իրավակիրառ պրակտիկայում վկայակոչված հոդվածներին տրված իրարամերժ մեկնաբանությունները, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

Ա) Արդյո՞ք Օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված եռամյա ժամկետը հանդիսանում է հայցային վաղեմության ժամկետ և կաշկանդում է իրավասու մարմնին այդ ժամկետում հայց ներկայացնել դատարան,

Բ) Այն դեպքում, երբ իրավասու մարմինը փոփոխում է ներկայացված հայցի հիմքն ու առարկան, արդյո՞ք նա կաշկանդված է Օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված եռամյա ժամկետով՝ հաշվի առնելով Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասը:

[6] Հանդիսանում է անձնական տվյալ:
[7] Հանդիսանում է անձնական տվյալ:

4.2. Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ ***<u>հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ</u>***[8]:

4.3. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է:

4.4. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը համապատասխանաբար սահմանում են. «1. Պահանջների որոշ տեսակների համար օրենքով կարող են սահմանվել հայցային վաղեմության ընդհանուր ժամկետի համեմատությամբ կրճատ կամ ավելի երկար հատուկ ժամկետներ: 2. Սույն օրենսգրքի 331, 334-343 հոդվածների կանոնները տարածվում են նաև հայցային վաղեմության հատուկ ժամկետների վրա, <u>եթե այլ բան սահմանված չէ օրենքով</u>»:

4.5. Օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Եթե սույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով կամ այլ օրենքներով, ապա <u>գործում են սույն օրենքով սահմանված կանոնները</u>»:

4.6. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն (այսուհետ՝ ուսումնասիրություն)՝ ընթացակարգ, որն ուղղված է ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության, դրա ծավալների և շահագրգիռ անձանց շրջանակի վերաբերյալ տվյալներ ձեռք բերելուն:

4.7. Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Ուսումնասիրություն սկսելը և դրա իրականացումը կանոնակարգող՝ սույն օրենքով նախատեսված ընթացակարգային պահանջների խախտումներն առաջացնում են միայն այնպիսի հետևանքներ, որոնք ուղղակիորեն նախատեսված են սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով կամ այլ օրենքներով»:

4.8. Իրավահարաբերության ծագման պահին գործող Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն.

«1. Ուսումնասիրությունը կարող է տևել առավելագույնը երկու տարի, որն իրավասու մարմնի որոշմամբ կարող է երկարացվել մինչև մեկ տարի ժամկետով, եթե դա պայմանավորված է միջազգային համագործակցության կարգով ուղարկված խնդրանքի կատարման կամ միջազգային համագործակցության կարգով ստացված տեղեկությունների հիման վրա գործողությունների կատարման անհրաժեշտությամբ:

2. Սույն հոդվածով նախատեսված ժամկետների խախտմամբ ներկայացված հայցը համարվում է ներկայացված հայցային վաղեմության ժամկետի բացթողումով»:

[8] Այստեղ և այլուր ընդգծումներն ըստ Վճռաբեկ դատարանի:

Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը փոփոխվել է 09.06.2022 թվականին՝ ՀՕ-277-Ն օրենքի 5-րդ հոդվածով (որն ուժի մեջ է մտել 10.07.2022 թվականին)[9], ըստ որի. «1. **Ուսումնասիրությունը կարող է տևել առավելագույնը երեք տարի**»: ՀՕ-277-Ն օրենքի՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» 9-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «**Սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված ժամկետը տարածվում է նաև սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին չավարտված ուսումնասիրությունների վրա**»:

4.9. Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը համապատասխանաբար սահմանում են. «2. Հիմք ընդունելով ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ ուսումնասիրության նյութերով հայտնի հանգամանքները՝ իրավասու մարմինը որոշում է ուսումնասիրվող ժամանակահատվածը, որը ներառում է ուսումնասիրությունն սկսելու մասին որոշման կայացումից մինչև ուսումնասիրության ավարտն ընկած ժամանակահատվածը, ինչպես նաև ուսումնասիրությունն սկսելու մասին որոշման կայացումից առաջ ընկած ժամանակահատվածը, որը չի կարող լինել ավելի երկար, քան ուսումնասիրությունն սկսելու մասին որոշման կայացմանը նախորդող տասը տարին, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:

3. Եթե ուսումնասիրության նյութերով ի հայտ են գալիս սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամանակահատվածից ավելի վաղ ձեռքբերված ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ կասկածներ, և այդպիսի գույքի ձեռքբերմանն առնչվող ապացույցները պահպանված են, ապա իրավասու մարմինը կայացնում է որոշում՝ սահմանելով ուսումնասիրվող նոր ժամանակահատված, որը կարող է ներառել բացառապես 1991 թվականի սեպտեմբերի 21-ից հետո ընկած ժամանակահատվածը»:

4.10. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

4.11. Համալիր վերլուծության ենթարկելով վերը վկայակոչված նորմերը՝ Վճռաբեկ դատարանը նախ արձանագրում է, որ սույն վեճի շրջանակներում շոշափվում է իրավական որոշակիության հարց, ուստի Վճռաբեկ դատարանը վերը՝ 4.1.-րդ կետի Ա) հարցադրման շրջանակում, կանդրադառնա դրան՝ մինչ այդ նկատելով, որ այս հարցը բարձրացվել է Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի կողմից Սահմանադրական դատարանի առջև, և որի կապակցությամբ Սահմանադրական դատարանը նշել է. «(...) *Ինչ վերաբերվում է Դիմողի այն պնդմանը, որ Օրենքն իրավասու մարմնի համար չի*

9 Սկզբնաղբյուր՝ Միասնական կայք 2022.06.27-2022.07.10, Պաշտոնական հրապարակման օրը՝ 30.06.2022:

նախատեսում դատարան դիմելու համար որևէ ժամկետային սահմանափակում, ապա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ժամկետային սահմանափակումների բացակայության բերումով անհատի իրավական վիճակի անորոշության հարցը կարող է հիմնավոր գնահատականի արժանանալ կոնկրետ գործի հանգամանքների հաշվառմամբ: Հետևաբար՝ առանց եռաստիճան դատական համակարգի կողմից Օրենքի՝ Դիմողի կողմից բարձրացված խնդրի նկատմամբ կիրառելի դրույթների մեկնաբանության և կիրառության, բացառապես Դիմողի կողմից համապատասխան մտահոգության բարձրաձայնումը բավարար չէ սահմանադրական վեճին բնորոշ որոշակիության աստիճանը բավարարված համարելու համար[10]»: Ասվածի համատեքստում Վճռաբեկ դատարանն առանձնակի ուշադրություն է դարձնում Վերաքննիչ դատարանի՝ սույն գործով Սահմանադրական դատարան ներկայացված դիմումին (տե՛ս վերը՝ 1.11.-րդ կետը) և դրա վերաբերյալ Սահմանադրական դատարանի 05.09.2025 թվականին կայացրած թիվ ՍԴԱՈ-135 որոշմանը (տե՛ս վերը՝ 1.12.-րդ կետը), ըստ որի՝ Սահմանադրական դատարանը, ըստ էության, վերահաստատելով իր նախկին դիրքորոշումները, նշել է. «*(…) Սահմանադրական դատարանը հարկ է համարում շեշտել սահմանադրական իրավունքների պաշտպանության երաշխավորման և իրավական անվտանգության ապահովման հարցում դատարանների ունեցած առանձնահատուկ առաքելությունը, քանզի անառարկելի իրողություն է, որ իրավական անորոշության հաղթահարման հարցում դատական իշխանությունն օժտված է առանցքային կարևորություն ունեցող իրավանորմերի դատական մեկնաբանության լծակով, որի՝ Սահմանադրությանը համահունչ կիրառումը սահմանադրականության հաստատման և սահմանադրական իրավակարգի ապահովման գրավականներից է: (…) Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասում ամփոփված Սահմանադրի կամքին ուղղակի հակասում է նաև դատարանների՝ վիճարկվող դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականության հարց Բարձր դատարանի առջև բարձրացնելը. սույն մոտեցումը խաթարում է եռաստիճան դատական համակարգի և Սահմանադրական դատարանի լիազորությունների ներդաշնակ սահմանազատումը՝ հաշվի առնելով դատական մեկնաբանման գործիքակազմով եռաստիճան դատական համակարգի օժտված լինելու հանգամանքը, առավել ևս այն պայմաններում, երբ դատարանները, և մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը, ունեն անհրաժեշտության պարագայում սեփական պրակտիկան զարգացնելու/փոփոխելու իրավական հնարավորություն*»:

4.12. Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է իրավական որոշակիության սահմանադրական պահանջի բովանդակության բացահայտմանը, որն ընդհանուր առմամբ ամփոփել է թիվ ՍԴՈ-1776 որոշման 308-րդ կետում[11]՝ նշելով. «- *Օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների*

10 Տե՛ս Սահմանադրական դատարանի 16.04.2025 թվականի թիվ ՍԴՈ-1776 որոշման (այսուհետ՝ թիվ ՍԴՈ-1776 որոշում) 207-րդ կետը:

11 Հաշվի առնելով, որ հղումը տրվում է թիվ ՍԴՈ-1776 որոշման 308-րդ կետին, ուստի Որոշման մեջ ՍԴ որոշումներին տրված հղումները չեն նշվում:

*եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համապատեղելու իր վարքագիծը: - «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը: Օրենքի կանխատեսելիությունը գնահատելու համար կարևոր գործոն է նաև տվյալ հարաբերությունները կանոնակարգող տարբեր կարգավորումների միջև հակասությունների առկայության կամ բացակայության հանգամանքը»: - «**Միաժամանակ, օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող ինքնաբավ լինել: Դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործողության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում**»: «- **Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով**: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս դիրքորոշում է արտահայտել առ այն, որ՝ «Չնայած այն բանին, որ սահմանումների որոշակիությունը խիստ ցանկալի է, միաժամանակ անհրաժեշտ է խուսափել դրանց չափազանց կոշտ լինելուց՝ իրավունքը պետք է ունակ լինի հետևել փոփոխվող հանգամանքներին: Այդ իսկ պատճառով, հաճախ օրենքներում առկա են տերմիններ, որոնք քիչ թե շատ անորոշ են: **Դրանց մեկնաբանումը և կիրառումը դատական պրակտիկայի խնդիր է** (The Sundey Times v. the United Kingdom (Application no. 6538/74, 26/04/79, § 49))»: - «Որոշակիության սկզբունքի համատեքստում հարցը քննարկելիս պետք է հաշվի առնել այն իրողությունը, որ **իրավական նորմերը, որպես ընդհանուր-վերացական կարգավորումներ, միշտ որոշակի մեկնաբանությունների կարիք ունեն, և գրեթե անհնար է իրավական միարժեք նորմերով հստակ կարգավորել հասարակական կյանքի բոլոր բազմաբնույթ հարաբերությունները**»: - «(...) **օրենքի որոշակիության պահանջ նախատեսելով հանդերձ՝ հնարավոր չէ բոլոր հարցերի կարգավորումը նախատեսել բացառապես օրենքով, այդ պատճառով այս հարցում կարևորվում է հատկապես դատական**

***ապյանների կողմից օրենքի հստակ մեկնաբանությունը**: - (...) Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ **նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով**»: Վերոգրյալը հաստատվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներով, մասնավորապես, Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի (Case of Busuioc v. Moldova, application no. 61513/00, 21/12/2004) վճռում դատարանը գտել է. «(...) որ **թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, սակայն դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են, և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է**»: - «(...) հաշվի առնելով կենսական հարցերի բազմազանությունը և նորմաստեղծ ճանապարհով բոլոր իրավիճակներին արձագանքելու անհնարինությունը՝ օրենսդրական և ենթաօրենսդրական կարգավորումների որոշակիության պահանջը չի բացառում անորոշ իրավական հասկացությունների ամրագրումն օրենքներում և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում, սակայն այն պարտադիր պետք է ուղեկցվի նման հասկացությունների համարժեք, իսկ նույնական դեպքերում՝ միատեսակ մեկնաբանությամբ, առանց որի անհնարին կլինի փաստել այդ դրույթների կանխատեսելիությունը»: - «(...) չնայած օրենսդրական կարգավորումների որոշակիության պահանջին, դրանք չեն կարող նախատեսել իրավահարաբերության բոլոր մանրամասները, քանի որ **կոնկրետ իրավահարաբերության բնույթով պայմանավորված մի շարք հանգամանքներ պետք է իրենց մեկնաբանությունն ստանան հենց դատական քննության ընթացքում**: - (...) Այդ իմաստով, հնարավոր չէ օրենսդրությունը կառուցել այն տրամաբանությամբ, որ դրանում առկա չլինեն գնահատողական կատեգորիաներ, մեկնաբանման ենթակա եզրույթներ կամ ձևակերպումներ, **<u>սակայն դա չի կարող հանգեցնել իրավական անորոշության</u>, քանի որ այդպիսի ձևակերպումներն իրենց մեկնաբանությունն ու հստակեցումն են ստանում արդեն դատարանի կողմից կոնկրետ գործի հանգամանքների հաշվառմամբ և գնահատվում են դատարանի իրավակիրառ հայեցողության լիազորությունների իրականացման շրջանակներում**: (...)*»:

4.13. Գալով հայցային վաղեմության ինստիտուտին՝ Սահմանադրական դատարանն իր թիվ ՍԴՈ-1611 որոշմամբ, ի թիվս այլ հարցերի, պատասխանելով նաև այն հարցին, թե ո՞րն է հայցային վաղեմության իրավական ինստիտուտի գործառույթային առաքելությունը և դրանով պայմանավորված վիճարկվող դրույթների **<u>սահմանադրական իրավական բովանդակությունն ու նշանակությունը</u>**[12], պատասխանել է. «*Սեփականության իրավունքի և քաղաքացիական ու ձեռնարկատիրական*

12 Տե՛ս Սահմանադրական դատարանի 28.09.2021 թվականի թիվ ՍԴՈ-1611 որոշման 5-րդ կետի 1-ին ենթակետը:

*շրջանառության պաշտպանության շահերը նախորոշում են իրավական կարգավորման կառուցակարգում ներմուծել իրավադրույթներ, որոնք կողմերից մեկին հնարավորություն են տալիս արգելակել վեճի ըստ էության դատական լուծումը, եթե մյուս կողմը դիմել է իր իրավունքների պաշտպանությանն այն պահից բավական երկար ժամանակ հետո, երբ իրեն հայտնի է դարձել իր իրավունքի խախտման մասին: Քաղաքացիական օրենսդրության մեջ դա է հայցային վաղեմության առաքելությունը: Այս համատեքստում առաջին հերթին անհրաժեշտ է արձանագրել, որ **հայցային վաղեմության ինստիտուտն ինքնին ուղղված է քաղաքացիական շրջանառության մեջ սեփականության, տնտեսական գործունեությամբ զբաղվելու, արդյունավետ դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքներին և մյուս սահմանադրական արժեքներին առնչվող քննարկված նպատակների երաշխավորմանն ու դրա միջոցով քաղաքացիական շրջանառության կայունության, իրավահարաբերությունների որոշակիության, դրանց մասնակիցների բարեխղճության, իրավունքների պաշտպանության գործիքակազմերի բարեխիղճ օգտագործման, արդյունքում նաև՝ իրավահարաբերությունների ոչ թե մեկ, այլ բոլոր սուբյեկտների հիմնարար իրավունքների պաշտպանության ապահովմանը: Նշված նպատակները բացառիկ կարևորություն ունեն իրավական պետության կայացման տեսանկյունից և պետք է ընկած լինեն հայցային վաղեմությանն առնչվող ցանկացած իրավակարգավորման և իրավակիրառական պրակտիկայի հիմքում**: Այդ հանգամանքը ստացել է ոչ միայն դոկտրինալ ձևակերպում, այլ արձանագրվել է նաև այլ երկրների արդարադատական պրակտիկայում: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքին առնչվող դիրքորոշումներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ **վաղեմության ժամկետները «ծառայում են մի քանի կարևոր նպատակների, որոնցից են՝ իրավական որոշակիության և վերջնականության ապահովումը, հնարավոր պատասխանողներին հնացած և հետևաբար դժվարությամբ վիճարկելի պահանջներից պաշտպանությունը, անարդար որոշումների նախականխումն այն դեպքերում, երբ դատարանից պահանջվի լուծել պահանջը վաղ անցյալում տեղի ունեցած փաստերի հաստատման միջոցով և այնպիսի ապացույցներով, որոնք զգալի ժամանակ անցնելու պատճառով այլևս անարժանահավատ կամ ոչ ամբողջական են դարձել**» (Սթաբինգսը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 22083/93 և 22095/93 դիմումներ, կետ 51, 1996 թվականի հոկտեմբերի 22-ի վճիռ, ինչպես նաև Կոեմեն և այլոք ընդդեմ Բելգիայի, թիվ 32492/96 և 4 այլ դիմումներ, 146 կետ, 2000 թվականի հունիսի 22-ի վճիռ): **Այսպիսով, հայցային վաղեմության ինստիտուտի նպատակն է կանոնակարգել քաղաքացիական շրջանառությունը, ստեղծել իրավական կապերի որոշակիություն ու կայունություն, ապահովել իրավահարաբերության մասնակիցների կարգապահությունը, նպաստել պայմանագրերի կատարմանը, ապահովել քաղաքացիական իրավահարաբերության սուբյեկտների իրավունքների և շահերի ժամանակին պաշտպանությունը: Խախտված քաղաքացիական իրավունքների պաշտպանության համար ողջամիտ ժամանակային**

սահմանափակումների բացակայությունը կհանգեցներ պատասխանողների և երրորդ անձանց իրավունքների ու շահերի խախտման, որոնք միշտ չէ, որ նախապես կարող էին հաշվի առնել գործի քննության համար նշանակություն ունեցող տեղեկությունների և փաստերի հավաքման ու պահպանման անհրաժեշտությունը: Միաժամանակ, հայցային վաղեմության կիրառումը քաղաքացիական շրջանառության մասնակիցներին պաշտպանում է անհիմն պահանջներից և միաժամանակ դրդում է նրանց ժամանակին հոգ տանել իրենց իրավունքների իրացման և պաշտպանության մասին: Հայցային վաղեմության ինստիտուտն իր կարևոր գործառութային նշանակությամբ համակարգային կապի մեջ է Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմունքների հետ, քանի որ կոչված է երաշխավորելու նաև վերջիններիս և հատկապես Սահմանադրության 1-ին հոդվածի, 10-րդ հոդվածի (Սեփականության երաշխավորումը), 11-րդ հոդվածի (Տնտեսական կարգը) հիմքերում ընկած տրամաբանությունն ու արժեքները[13]***: (...) Վերահաստատելով և զարգացնելով իր մի շարք վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ հայցային վաղեմության ինստիտուտն ուղղված է դատական պաշտպանության իրավունքի և Սահմանադրությամբ ամրագրված այլ հիմնարար իրավունքների չարաշահման բացառմանը: Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք: Սահմանադրական դատարանը փաստում է, որ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետությունը չի կարող երաշխավորվել այն իրավիճակներում, երբ կողմերից մեկը չարաշահում է իր իրավունքները, այդ թվում՝ դատարան դիմելու իրավունքը: (...) Այս պարագայում՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հայցային վաղեմության ինստիտուտը կողմերից մեկի դիտանկյունից հանդես է գալիս որպես դատարան դիմելու իրավունքի սահմանափակում՝ դատավարական կոնկրետ կանոնի հիմքով, որը, միևնույն ժամանակ, համապատասխանում է իրավունքի սահմանափակման իրավաչափության վերը նշված չափանիշներին: Ուստի, նշյալ ինստիտուտի և իրավակարգավորումների՝ այդ հանգամանքին հակասող որևէ եղանակով մեկնաբանություն և կիրառում կհակասի վերջիններիս սահմանադրահիրավական բովանդակությանը***[14]***: (...) Սահմանադրական դատարանը գտնում է, որ հայցային վաղեմության ինստիտուտը ևս նպատակ ունի ապահովել հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման անհրաժեշտ երաշխիքներ, և պետք է հանգեցնի ոչ թե նշված իրավունքների էության ձևախեղմանը, այլ վերջիններիս արդյունավետ իրացմանն ու պաշտպանությանը***[15]»:

4.14. Օրենսդիրն Օրենքի ընդունման նպատակի և հիմնավորմանն անդրադառնալիս, ի թիվս այլնի, նշել է. «***Օրենքի նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է կատարելագործել Հայաստանի Հանրապետությունում ապօրինի ճանապարհով***

[13] Տե՛ս նույն տեղը, կետ՝ 6.1.:
[14] Տե՛ս նույն տեղը, կետ՝ 6.2.2.:
[15] Տե՛ս նույն տեղը, կետ՝ 6.2.3.:

***ստացված գույքը տնտեսական շրջանառությունից հանելու օրենսդրական գործիքակազմը, ինչն ավելի արդյունավետ կդարձնի ֆինանսական հանցագործությունների կանխարգելումը: Նախագիծը նպատակ է հետապնդում որդեգրել միջազգային պայմանագրերով և միջազգային կառույցների խորհրդատվական բնույթի փաստաթղթերով առաջարկվող լավագույն չափանիշները հանցավոր ակտիվների շրջանառության դեմ պայքարի ոլորտում[16]: (...) Մշակված նախագիծը թույլ է տալիս ուսումնասիրել գույքը, դրա ձեռքբերումը և օգտագործումը և ներկայացնել բռնագանձման պահանջ, եթե գույքի ձեռքբերումը չի հիմնավորվում օրինական եկամուտներով: Նշված դեպքում գույքը օրենքի իմաստով համարվում է ապօրինի ծագում ունեցող և ենթակա է բռնագանձման[17]: (...) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջը, կարող է ներկայացվել և քննվել ՀՀ քաղաքացիական դատավարության կարգով: Համապատասխանաբար օրենքի նախագիծը կարգավորում է հայցի ներկայացման համար նյութերի և ապացույցների հավաքման ընթացքը՝ կանխատեսելի դարձնելով իրավասու պետական մարմնի գործողությունների հերթականությունը, ինչպես նաև նախատեսում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի քննության դատավարական առանձնահատկությունները[18]: (...) <u>Անձանց հիմնարար իրավունքների պաշտպանության համար սահմանվել են մի շարք երաշխիքներ, այդ թվում՝ ուսումնասիրությունների իրականացման սահմանափակ ժամկետներ[19]</u>»**:

4.15. Վերն ասվածի լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը նախ արձանագրում է, որ Օրենքով հետապնդվող շահը տարբերվում է դասական քաղաքացիական իրավունքին բնորոշ՝ հայցային վաղեմության ինստիտուտին հատուկ հետապնդվող շահից, և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթներում գործում է հայցային վաղեմության հատուկ ժամկետների կանոնը (տե՛ս վերը՝ 4.4.-րդ կետը): Այլ կերպ ասած՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ, 334-343-րդ հոդվածների կանոնները տարածվում են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման իրավահարաբերությունների նկատմամբ **այնքանով, որքանով դրանք կիրառելի են այդ վարույթի նկատմամբ** (տե՛ս վերը՝ 4.5.-րդ կետը): Վճռաբեկ դատարանը հարցը դիտարկում է երկու մրցակցող արժեքների լույսի ներքո՝ **<u>ապօրինի ծագում ունեցող գույքը քաղաքացիական շրջանառությունից հանելու հանրային շահի</u>** և **<u>իրավական որոշակիության՝ քաղաքացիական շրջանառության ու տնտեսական կայունության</u>** տեսանկյուններով՝ հավասարակշռելով և հակակշռելով դրանք:

4.16. Վճռաբեկ դատարանն արձանագրելով հանդերձ, որ Օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված ժամկետը համապատասխանում է դասական քաղաքացիական իրավահարաբերությունների հայցային վաղեմության ընդհանուր ժամկետին (տե՛ս վերը՝ 4.3.-րդ և 4.8.-րդ կետերը), սակայն ընդգծում է, որ այն ունի որոշակի

---

[16] Տե՛ս Հիմնավորումներ՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների ընդունման մասին, կետ՝ 21:
[17] Տե՛ս նույն տեղը, կետ՝ 54:
[18] Տե՛ս նույն տեղը, կետ՝ 91:
[19] Տե՛ս նույն տեղը, կետ՝ 106:

առանձնահատկություններ, ի տարբերություն դասական քաղաքացիական իրավահարաբերություններում հայցային վաղեմությանը, որտեղ գործում է «*իմացել է կամ կարող էր իմանալ*» կանոնը, ըստ որի՝ անձն (այդ թվում՝ Դատախազությունը) իր (հանրային շահի) խախտված իրավունքների համար կարող է դիմել դատարան իմանալու (կարող էր իմանալ) պահից համապատասխան ժամկետում, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում գործում են այլ կանոններ, ըստ որոնց՝ կարևորվում է ոչ թե իմանալու պահը, այլ համապատասխան ընթացակարգը (վարույթի հարուցումից մինչև հայցադիմումը դատարան ներկայացնելը): Մասնավորապես, իրավասու մարմինը բացառապես Օրենքով նախատեսված դեպքերում և կարգով իրավունք ունի սկսել ուսումնասիրություն (Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մաս), ուսումնասիրությունը պետք է իրականացվի Օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված որոշակի հստակ ժամանակահատվածի մասով, իրավասու մարմինն այդ ժամանակահատվածի մասով պետք է հավաքի համապատասխան նյութեր և դիմի դատարան, եթե հավաքված նյութերով հիմնավորվում է, որ առկա է ապօրինի ծագում ունեցող գույք: Օրենսդիրն այս ողջ գործընթացի համար սահմանել է առավելագույնը երեք տարի ժամկետ՝ սկսած ուսումնասիրություն սկսելու վերաբերյալ որոշման կայացման պահից (տե՛ս վերը՝ 4.8.-4.9.-րդ կետերը):

4.17. Օրենքով սահմանված ընթացակարգի կանոնները չպահպանելը բերում է նրան, որ վրա է հասնում դրա բացասական հետևանքները, մասնավորապես՝ քննարկվող դեպքում, եթե իրավասու մարմինը խախտում է սահմանված ժամկետները, ապա պատասխանողը դատարանում քաղաքացիա-դատավարական կարգով կարող է հանդես գալ համապատասխան միջնորդությամբ՝ հայցային վաղեմություն կիրառելու և հայցը մերժելու պահանջով (տե՛ս վերը՝ 4.7.-րդ կետը):

4.18. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված ժամկետը երաշխիք է հանդիսանում մի կողմից՝ անձանց համար զերծ լինել իրենց գույքի վերաբերյալ անվերջ ուսումնասիրություններից, որը ստեղծում է անորոշ և անհանգիստ վիճակ ու բացասաբար կարող է անդրադառնալ քաղաքացիական շրջանառության և տնտեսական կայունության վրա, իսկ մյուս կողմից՝ ուղերձ է իրավասու մարմնին՝ հանրային շահի հետապնդման գործում գործել պատշաճ ջանասիրությամբ (*due diligence*): Ասվածի լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը ելնում է *կանխավարկածային վնասի* չափանիշից, որի ներքո առանձնացնում է երեք հիմնական շահ, այն է՝

ա/ կանխել իրավասու մարմնի կողմից տևական ուսումնասիրությամբ պատճառվող հնարավոր նյութական վնասները, որոնք կարող են կրել պատասխանողները ժամանակի չափից երկար հոսքից,

բ/ նվազեցնել անձի տագնապն ու մտահոգությունը (անորոշ վիճակ),

գ/ սահմանափակել պատասխանողներին հասցվող դատավարական վնասը, որը կարող է դրսևորվել ապացույցների կորստով, վկաների մահով, հիշողության թուլացմամբ:

4.19. Թեև Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի (տե՛ս վերը՝ 4.6.-րդ կետը) տառացի մեկնաբանությունը կարող է բերել այն եզրահանգման, որ Օրենքի 8-րդ

հոդվածի 1-ին մասում նշված ժամկետը վերաբերում է բացառապես ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության, դրա ծավալների և շահագրգիռ անձանց շրջանակի վերաբերյալ տվյալներ ձեռք բերելուն, սակայն միայն տառացի մեկնաբանման մեթոդով նորմը մեկնաբանելը նույն տրամաբանությամբ կարող է բերել նաև նրան, որ Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը չի օգտագործել «*ուսումնասիրություն*[20]» բառը, նորմում առկա է միայն մեկ ժամկետ, ու օրենսդիրն օգտագործել է «*հայցային վաղեմություն*» հասկացությունը, որը միայն տառացի մեկնաբանման դեպքում նշանակում է, եթե իրավասու մարմինը երեք տարվա ժամկետի խախտմամբ է հայց ներկայացրել դատարան, ապա համարվում է, որ նա բաց է թողել հայցային վաղեմության ժամկետը:

4.20. Նմանատիպ խնդիրներին չբախվելու համար Վճռաբեկ դատարանն առանձնակի կարևորում է, որ **<u>իրավակիրառ պրակտիկան ուշադրություն դարձնի նորմի նպատակին և, թե ինչ արժեքների ու շահերի պաշտպանությանն է ուղղված</u>**: Այս խնդիրը լուծելու համար պետք է ուշադրություն դարձվեն նորմի բառերի և արտահայտությունների տառացի նշանակությանը, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստին, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներին, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներին, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներին (տե՛ս վերը՝ 4.10.-րդ կետը): Մեկնաբանման գործընթացքում անհրաժեշտ է **<u>աներկբայորեն հաշվի առնել Սահմանադրությամբ ամրագրված արժեքները և դրանց համապատասխան, բացահայտելով օրենքի՝ որպես Սահմանադրությանը համապատասխանող ժամանակակից ընկալումը (*presumptio iuris de constitutionality*), գտնել օրենքի այն նշանակությունը, որն ընդունող մարմինն ամփոփել է օրենքի տեքստում՝ դրանով իսկ բացահայտելով նորմի նպատակը: Նորմի բացառապես տառացի մեկնաբանումը կարող է բերել տվյալ իրավունքի ձևախեղմանը, խախտել Սահմանադրությամբ հռչակված երաշխիքները (արժեքները) և կարող է խաթարել իրավական պետության հիմքերը (որի հիմնաքարն է հանդիսանում իրավունքի գերակայությունը) (Սահմանադրության 1-ին հոդված)</u>**: Որպես ասվածի շարունակություն Վճռաբեկ դատարանն ավելորդ չի համարում հիշատակել իրավունքում հայտնի ու հետագայում դոկտրինալ նշանակություն ստացած «*Ոսկե կանոնը*», որի համաձայն՝ ***իրավունքի նորմը մեկնաբանելիս բառերի քերականական և սովորական նշանակությանը պետք է հարել այնքան ժամանակ, քանի դեռ այն չի հանգեցրել որոշակի անհեթեթության կամ անհամապատեղելիության փաստաթղթի մնացած մասի հետ: Նման դեպքերում բնական նշանակությունը կարող է ձևափոխվել միայն այնքանով, որքանով անհրաժեշտ է այդ անհեթեթությունից կամ հակասությունից խուսափելու համար***[21]:

---

20 Օրինակ. «Սույն հոդվածով նախատեսված *ուսումնասիրության* ժամկետների խախտմամբ ներկայացված հայցը համարվում է ներկայացված հայցային վաղեմության ժամկետի բացթողումով»:

21 Տե՛ս Grey v. Pearson [1857] 6 HL Cas 61, (1857) 10 ER 1216.

4.21. Վճռաբեկ դատարանը, *inter alia* (տե՛ս վերը՝ 4.12.-րդ կետը), ուշադրություն է դարձնում նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից իր նախադեպային իրավունքում ընդունված այն մոտեցմանը, ըստ որի. «***(...) որքան էլ իրավական դրույթը հստակ կազմված լինի, իրավունքի ցանկացած համակարգում կա դատական մեկնաբանության անխուսափելի տարր: Միշտ կասկածելի կետերը պարզաբանելու և փոփոխվող հանգամանքներին հարմարվելու անհրաժեշտություն կլինի: Կրկին, չնայած որոշակիությունը խիստ ցանկալի է, այն կարող է իր հերթին առաջացնել չափազանց կոշտություն, իսկ օրենքը պետք է ի վիճակի լինի համընթաց ընթանալ փոփոխվող հանգամանքների հետ: Ըստ այդմ, շատ օրենքներ անխուսափելիորեն շարադրվում են այնպիսի եզրույթներով, որոնք ավելի կամ պակաս չափով անորոշ են, և որոնց մեկնաբանությունն ու կիրառումը պրակտիկայի հարցերն են: Դատարաններին վերապահված վճիռ կայացնելու դերն էլ հենց մեկնաբանության մեջ մնացած կասկածները վերանայելն է***[22]»:

4.22. Ասվածի լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը նաև չի կարող անտեսել «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովի» (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով) այն մտահոգությունը, ըստ որի. «(...) *Ավելին, ժամկետների՝ նման ընդլայնման պարագայում ուսումնասիրման ժամանակահատվածը չափազանց երկար է թվում: Անհրաժեշտ է նաև նկատել, որ ուսումնասիրության ժամանակահատվածը ժամանակի ընթացքում ընդլայնվելու է*[23]*: Երկրորդ, Օրենքը, ըստ էության, իրավասու մարմնի հայեցողությանն է թողնում յուրաքանչյուր կոնկրետ գործով իր ժամանակային իրավասության հարցի որոշումը: Այսպես՝ Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «իրավասու մարմինը որոշում է (...) ուսումնասիրությունն սկսելու մասին որոշման կայացումից առաջ ընկած ժամանակահատվածը, որը չի կարող լինել ավելի երկար, քան ուսումնասիրությունն սկսելու մասին որոշման կայացմանը նախորդող տասը տարին», իսկ Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «(...) իրավասու մարմինը կայացնում է որոշում՝ սահմանելով ուսումնասիրվող նոր ժամանակահատված»: Խնդրահարույց է այն հանգամանքը, որ Օրենքի գործողության ժամանակային շրջանակի վերաբերյալ կարևոր հարցը հստակ կարգավորված չէ հենց Օրենքով, այլ թողնված է վարչական մարմնի առերևույթ անսահմանափակ հայեցողությանը: Բացի դրանից, Օրենքով սահմանված չէ որևէ ժամկետ, որի շրջանակներում կարող է իրականացվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ գույքի բռնագանձման գործընթացը (...):* ***Նման ժամկետի բացակայությունը կարող է բացասաբար ազդել իրավական որոշակիության վրա՝ դատական վերահսկողության առարկա դարձնելով փևական ժամանակ առաջ տեղի ունեցած իրադարձությունները***[24]»:

---

[22] Տե՛ս OAO Neftyanaya Kompaniya Yukos v. Russia թիվ 14902/04, &568, 2011 թվականի սեպտեմբերի 20:

[23] Համեմատության կարգով՝ տե՛ս 15 տարվա ժամկետը գործնականում նվազեցնելու վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի առաջարկը («Ապօրինի գործունեության արդյունքում կամ վարչական իրավախախտման արդյունքում ձեռք բերված գույքի բռնագանձման մասին» Բուլղարիայի Հանրապետության վեցերորդ անգամ վերանայված օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի թիվ CDL-AD(2011)023 կարծիք, 2011թ. հունիսի 20, 47-րդ պարբերություն):

[24] Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի՝ Սահմանադրական դատարանի համար՝ ««Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի որոշակի հարցերի վերաբերյալ» թիվ CDL-AD(2022)048 (թիվ 1108/2022) խորհրդատվական կարծիք (Amicus Curiae Brief for the Constitutional Court of Armenia on Certain Questions Relating of the Law on the Forfeiture of Assets of Illicit Origin), 2022 թվականի դեկտեմբերի 19 (այսուհետ՝ Խորհրդատվական կարծիք), կետեր՝ 53-55:

4.23. Վերը ողջ ասվածի շրջանակներում՝ Վճռաբեկ դատարանը, Օրենքի նպատակը, դրանով հետապնդվող շահը, ինչպես նաև Սահմանադրությամբ երաշխավորված հիմնարար իրավունքները հիմքում ունենալով՝ մասնավորապես, որ *անձանց* ***<u>հիմնարար իրավունքների պաշտպանության համար սահմանվել են մի շարք երաշխիքներ, այդ թվում՝ ուսումնասիրությունների իրականացման սահմանափակ ժամկետները</u>***, արձանագրում է, որ Օրենքի 8-րդ հոդվածում նշված ժամկետը հանդիսանում է իրավական որոշակիության սկզբունքին համապատասխան՝ անձանց պաշտպանության միջոց: Այլ կերպ ասած՝ Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը՝ «***հայցային վաղեմություն***» տերմինն օգտագործելով, իրավասու մարմնի համար սահմանել է երեք տարվա ժամկետ՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթն ավարտելու և համապատասխան հայց ներկայացնելու համար (*deadline for state action*): **Նշված նորմի հակառակ մեկնաբանությունը ստեղծում է անորոշ և անտրամաբանական իրավիճակ, ըստ որի՝ օրենսդիրը, <u>ելնելով անձի հիմնարար իրավունքների պաշտպանության երաշխիքներից, մի կողմից սահմանել է ուսումնասիրությունների իրականացման սահմանափակ ժամկետներ (տե՛ս վերը՝ 4.14.-րդ կետը)</u>, սակայն մյուս կողմից իրավասու մարմնին օժտել է անժամկետ իրավունք դատարան հայց ներկայացնելու համար: <u>Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդրի նպատակը, ակնհայտորեն, չի կարող լինել անորոշ իրավիճակի ստեղծումը՝ ի հակադրություն Սահմանադրության 79-րդ հոդվածի (տե՛ս վերը՝ 4.2.-րդ կետը) և, որպես հետևանք, նաև Սահմանադրության 1-ին, 3-րդ և 60-րդ հոդվածների</u>**:

4.24. Ամփոփելով, Վճռաբեկ դատարանը, վերը՝ 4.1.-րդ կետի Ա) ենթակետում առաջ քաշված հարցադրման շրջանակում, արձանագրում է. **Օրենքի 8-րդ հոդվածը պետք է մեկնաբանվի այնպես, որ ուսումնասիրության համար առավելագույնը երեք տարի ժամկետն իր մեջ ներառում է իրավասու մարմնի կողմից այդ ժամկետում սահմանված կարգով դատարան հայց ներկայացնելը: Ժամկետի հաշվարկի սկիզբ է հանդիսանում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով իրավասու մարմնի կողմից ուսումնասիրություն սկսելու վերաբերյալ որոշման կայացման օրը: Այն դեպքում, երբ իրավասու մարմինն այդ ժամկետի խախտմամբ է հայց ներկայացնում դատարան, ապա հայցը համարվում է ներկայացված հայցային վաղեմության ժամկետի բացթողումով և առաջացնում է համապատասխան բացասական հետևանքներ:**

4.25. Անդրադառնալով վերը՝ 4.1.-րդ կետի Բ) ենթակետում առաջ քաշված հարցադրմանը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է.

4.26. Օրենսգրքի 1-ին հոդվածի 2.1.-րդ մասի համաձայն. «Սույն օրենսգրքով սահմանված կանոնները կիրառելի են Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն դատարանում (այսուհետ՝ հակակոռուպցիոն դատարան) պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության և <u>ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերի քննության, ինչպես նաև մինչև գործի հարուցումն առանձին դատավարական գործողությունների կատարման</u>, վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանում պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության և

ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով կայացված ակտերի դեմ բողոքների քննության նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով»:

4.27. Օրենսգրքի 170-րդ հոդվածի սույն գործին վերաբերելի մասերը սահմանում են. «1. Հայցվորը հայցի առարկայի և հիմքի կամ դրանցից յուրաքանչյուրի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ ներկայացնում է գրավոր միջնորդություն մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը: 2. Սույն օրենսգրքի իմաստով՝ հայցի առարկայի փոփոխությունը հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջն այլ պահանջով փոխարինելը, պահանջը փոփոխելը կամ լրացնելն է, այդ թվում՝ պահանջների չափն ավելացնելը կամ նվազեցնելը, որը թույլատրում է առաջին ատյանի դատարանը: 3. Սույն օրենսգրքի իմաստով՝ հայցի հիմքի փոփոխությունը հայցվորի կողմից հայցի հիմքում սկզբնապես դրված փաստերն այլ փաստերով փոխարինելն է, ինչպես նաև հայցի հիմքում դրված փաստերի շրջանակը ճշգրտելն է այն լրացնելու կամ պակասեցնելու եղանակով: 5. Հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը դատարանը մերժում է, եթե այն բավարարելու դեպքում փոփոխվում է այն իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է, կամ քննվող գործը դուրս է գալու առաջին ատյանի դատարանի ենթակայության սահմաններից»:

4.28. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը համապատասխանաբար սահմանում են. «1. Իրավասու մարմինը սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում կայացնում է ուսումնասիրություն սկսելու մասին որոշում՝ նշելով դրա հիմքում ընկած փաստական տվյալները և սույն օրենքի 5-րդ հոդվածում նախատեսված այն հիմքը, որի հիման վրա սկսվում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը: Իրավասու մարմինն ուսումնասիրություն սկսելու մասին որոշմամբ նաև նշում է այն անձի տվյալները, որին ենթադրաբար պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք: 2. Նույն գույքի առնչությամբ ուսումնասիրություն կարող է սկսվել, եթե առկա է նախորդող ուսումնասիրության հիմքերից տարբերվող հիմք, որը հայտնի չէր և չէր կարող հայտնի լինել իրավասու մարմնին նախորդ ուսումնասիրությունն սկսելու պահին»:

4.29. Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Հայցվորի կողմից հայցադիմումով կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով հայցի առարկան և (կամ) հիմքը փոփոխելու միջոցով կարող է ներկայացվել նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի հետ կապված ցանկացած այլ պահանջ, այդ թվում՝ առ ոչինչ գործարքի անվավերության հետևաքննների կիրառման, վիճահարույց գործարքի անվավեր ճանաչման, դրա անվավերության հետևանքների կիրառման պահանջ, կամ վիճարկվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի համար նշանակություն ունեցող ցանկացած պայմանագիր կնքված լինելու հանգամանքը: Սույն մասով նախատեսված պահանջների համար չեն գործում Հայաստանի

Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով կամ այլ օրենքներով նախատեսված հայցային վաղեմության ժամկետները: Սույն մասով նախատեսված պահանջները կարող են ներկայացվել միայն սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված կարգով որոշված ժամկետներում ծագած հարաբերությունների առնչությամբ»:

4.30. Օրենսդիրն Օրենքի ընդունման նպատակին և հիմնավորմանն անդրադառնալիս, ի թիվս այլնի, նշել է. «*Օրենքի հիման վրա իրականացվող ուսումնասիրության ծավալը ներառում է փոխկապակցված անձանց անհատույց կամ շուկայականից էականորեն տարբերվող գնով փոխանցված գույք: Այդպիսի օտարման գործարքը չի կարող որևէ իրավական հետևանքներ ունենալ պետության նկատմամբ, քանի որ անձը, ով փոխանցել է գույքը, չի հանդիսացել դրա սեփականատերը, հետևաբար իրավունք չի ունեցել այն փոխանցել: Մյուս կողմից՝ այդպիսի գույքի նկատմամբ առկա է պետության իրավունքը, որը ծագել է գույքի ապօրինի ճանապարհով ձեռքբերելու պահին*[25]*: (...) Օրենքի նախագծի հիման վրա իրականացվող ուսումնասիրության ծավալը ներառում է նաև այն գույքը, որը պատկանում է այլ անձի, բայց որի իրական շահառուն է հանդիսանում անձը, ում գույքի առնչությամբ նախաձեռնվել է ուսումնասիրությունը: Այս կարգավորումն ուղղված է կանխելու այն իրավիճակները, երբ գույքի իրավական սեփականատիրոջը փոխելով՝ գույքի փաստացի սեփականատերը փորձում է թաքցնել իր գույքի իրական ծավալները*[26]*: (...) Ամեն դեպքում, եթե անձին պատկանող գույքի ծավալներում ներառվում է գույք, որն իրավական տեսանկյունից պատկանում է այլ անձի, իրավասու մարմինը կրում է փոխկապակցվածությամբ կատարված գործարքի կամ իրական շահառու հանդիսանալու հանգամանքի ապացուցման պարտականությունը*[27]»:

4.31. Նախկինում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է. «(...) *հայցն անհատականացվում է իր այս երկու տարրերի՝ հայցի հիմքի և առարկայի շնորհիվ: Հենց հայցի հիմքով ու առարկայով են որոշվում հայցերի նույնությունն ու տարբերությունը միևնույն սուբյեկտային կազմի դեպքում: ՀՀ օրենսդրությունն ընձեռում է հայցի հիմքն ու առարկան փոփոխելու հնարավորությունը, ընդ որում, հայցի առարկայի փոփոխությունը ենթադրում է հայցվորի՝ պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջի փոփոխություն, իսկ հայցի հիմքի փոփոխությունն այն հանգամանքների փոփոխությունն է, որոնց վրա հիմնվում է այդ նյութաիրավական պահանջը*[28]»:

4.32. Մեկ այլ գործով ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է. «(...) *հայցի փոփոխմանն ուղղված դատավարական գործողությունը փնօրինչական ակտ է: Փոփոխելով հայցի տարրերը՝ հայցվորը, ըստ էության, «հրաժարվում» է սկզբնապես ներկայացված հայցից և միաժամանակ պահանջում է, առանց սկզբնապես ներկայացված պահանջով վարույթը կարճելու, քննել փոփոխված հայցը: Հրաժարվելով սկզբնապես*

[25] Տե՛ս Հիմնավորումներ՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների ընդունման մասին, կետ՝ 95:
[26] Տե՛ս նույն տեղը՝ կետ 97:
[27] Տե՛ս նույն տեղը՝ կետ 104:
[28] Տե՛ս Ա/Ձ Էդմոնդ Ասատրյանը և Կարինե Բաղջյանն ընդդեմ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/2924/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը:

առաջադրված պահանջի իրավաչափության վերաբերյալ դատարանի պատասխանը ստանալու իրավունքից՝ հայցվորը միաժամանակ ձեռք է բերում փոփոխված հայցով վճռահատություն պահանջելու իրավունք[29]»:

4.33. Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իր թիվ ՀԿԴ/0025/02/22 հակակոռուպցիոն քաղաքացիական գործով 15.04.2026 թվականին կայացրած որոշմամբ նշել է. «*Վճռաբեկ դատարանը նախ արձանագրում է, որ Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասում օրենսդրի կողմից նշված. «հայցադիմումով (...) կարող է ներկայացվել նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի հետ կապված ցանկացած այլ պահանջ» հասկացությունն ունի միայն մեկ սահմանափակում, այն է՝ ցանկացած նյութաիրավական պահանջ պետք է բխի ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման՝ նյութաիրավական պահանջից: Նշվածի համար հիմք է հանդիսանում ոչ միայն Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասում օգտագործված՝ «**<u>ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի հետ կապված</u>**» հասկացությունը, այլև Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը, որը հստակ գծում է այն սահմանները, որոնց շրջանակներում իրավասու մարմինը կարող է հայց ներկայացնել դատարան: Ասվածի համատեքստում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավասու մարմինն ազատ է ինչպես հայցադիմումով, այնպես էլ հետագայում՝ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ հայցի հիմքի և առարկայի փոփոխության շրջանակներում ներկայացնելու ցանկացած պահանջ, **<u>որը բխում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջից</u>**: Բոլոր դեպքերում, երբ վեճ է առաջանում, թե որքանով է երկրորդական պահանջը կապված հիմնական՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի հետ, ապա իրավասու մարմինը պետք է հիմնավորի այդ կապը*[30]»:

4.34. Վերը նշվածի լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը նախ վերահաստատում է ՀՀ վճռաբեկ դատարանի վերը՝ 4.31.-4.32.-րդ կետերում նշված դիրքորոշումները և հարկ է համարում ավելացնել, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթներում հայցի առարկան՝ **ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքը բռնագանձելու պահանջն է (*petitum*)**, որը հայցվորն ուղղում է պատասխանողին (ինչ է պահանջում), իսկ հայցի հիմքն այն իրավաբանական փաստերն են, որոնց վրա հայցվորը հիմնավորում է **ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջը (*causa petendi*)** (ինչ պատճառներով է պահանջում): Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջով հայցի փոփոխությունը նշանակում է կա՛մ նոր պահանջի առաջադրում, որը կարող է դրսևորվել պահանջը փոփոխելով կամ լրացնելով, այդ թվում՝ պահանջների չափն ավելացնելը կամ նվազեցնելը (առարկայի փոփոխություն) կա՛մ այն փաստական հանգամանքների վերանայում (սկզբնապես վկայակոչված փաստերն այլ փաստերով փոխարինելը, ճշգրտումն այն լրացնելու կամ փոփոխելու եղանակով), որոնք հիմնավորում են այդ պահանջը (հիմքի փոփոխություն): Միաժամանակ, հայցի հիմքի և

[29] Տե՛ս ըստ դիմումի «Գուդկրեդիտ» լուծարվող ՈւՎԿ ՓԲԸ-ի թիվ ԵԴ/11155/02/20 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.02.2025 թվականի որոշումը:

[30] Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ՀԿԴ/0025/02/22 հակակոռուպցիոն քաղաքացիական գործով 15.04.2026 թվականի որոշման 5.48.-5.49.-րդ կետերը:

առարկայի փոփոխությունը չպետք է հանգեցնի նրան, որ փոփոխվի օրենքով պահպանվող այն շահը, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է, **սա սկզբունքորեն անթույլատրելի է** (տե՛ս վերը՝ 4.27.-րդ կետը):

4.35. Ի տարբերություն պետական շահերի պաշտպանության նպատակով հարուցված հայցերի (որի դեպքում գործում է հայցային վաղեմության ընդհանուր կանոնները), ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթներում կարևորվում է Օրենքով սահմանված ընթացակարգային կանոնները (տե՛ս վերը՝ 4.26.-րդ կետը), որի շրջանակներում իրավասու մարմինը համապատասխան հիմքերի առկայության **դեպքում ուսումնասիրության առարկա է դարձնում կոնկրետ գույքը (*in rem վարույթ*), այնուհետև՝ այն անձի (անձանց) տվյալները, որին ենթադրաբար պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույքը**: ***In rem*** (ընդդեմ գույքի) վարույթում իրավասու մարմնի հիմնական և առաջնային պահանջը գույքի դեմ է, որից ածանցվում է գույքով շահագրգռված անձանց ուղղված պահանջը՝ վերադարձնելու այդ գույքը, իսկ անհնարինության դեպքում վճարել դրա արժեքը դրամով: Նույն գույքի առնչությամբ ուսումնասիրություն կարող է սկսվել, եթե առկա է նախորդ ուսումնասիրության հիմքերից տարբերվող հիմք, որը հայտնի չէր և չէր կարող հայտնի լինել իրավասու մարմնին նախորդ ուսումնասիրությունն սկսելու պահին (տե՛ս վերը՝ 4.28.-րդ կետը):

4.36. Հարկ է նկատել, որ ի տարբերություն դասական քաղաքացիական իրավահարաբերությունների, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթներում գործում է գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը[31], **որի շրջանակներում ապացուցման հիմնական բեռն ընկած է գույքով շահագրգիռ անձի վրա**, **իրավասու մարմինն ինքն է որոշում ուսումնասիրվող ժամանակահատվածը**, որը ներառում է ուսումնասիրություն սկսելու մասին որոշման կայացումից մինչև ուսումնասիրության ավարտն ընկած ժամանակահատվածը, ինչպես նաև ուսումնասիրությունն սկսելու մասին որոշման կայացումից առաջ ընկած ժամանակահատվածը՝ ընդհուպ տասը տարի, իսկ որոշ դեպքերում՝ նաև 1991 թվականի սեպտեմբերի 21-ից հետո ընկած ժամանակահատվածը[32]: **Գործում է ուսումնասիրության գաղտնիության ռեժիմը**[33], որի շրջանակներում **իրավասու մարմինն Օրենքի 12-րդ հոդվածի հիման վրա, մինչև հայցի հարուցումը կարող է հավաքել օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկություններ: Իրավասու մարմինն իրական շահառուների, փոխկապակցված անձանց շրջանակը և գույքի ծավալը պարզելու նպատակով իրավունք ունի հանձնարարելու իրականացնել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ**[34]: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի վերաբերյալ **շահագրգիռ անձինք տեղեկանում են միայն այն բանից հետո, երբ իրավասու մարմինն ամփոփել է ուսումնասիրության նախնական**

[31] Տե՛ս Օրենքի 22–րդ հոդվածը:
[32] Տե՛ս Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը:
[33] Տե՛ս Օրենքի 9-րդ հոդվածը:
[34] Տե՛ս Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը:

արդյունքները[35], **դիմել է դատարան՝ հայցի նախնական ապահովման միջոցներ**[36]**, ինչպես նաև ապացույցների նախնական ապահովում կիրառելու պահանջներով**[37] (եթե այդպիսի միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը տեսել է): **Այսինքն՝ ուսումնասիրության ավարտի պահին իրավասու մարմինը որոշակիորեն պետք է հայտնաբերած լինի այն ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքը, որը չի հիմնավորվել անձի օրինական եկամուտներով**:

4.37. Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը, հարցը դիտարկելով երկու մրցակցող արժեքների լույսի ներքո (տե՛ս վերը՝ 4.15.-րդ կետը), արձանագրում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթն իրենից ներկայացնում է ընդդեմ գույքի (*in rem*) վարույթ, ուստի կարևորվում է ոչ թե գույքով շահագրգռված անձը, այլ՝ գույքը, և երեք տարվա պահանջը վերաբերում է գույքին, այլ ոչ թե անձին: **Իրավասու մարմինն ունի ավելի քան բավարար գործիքակազմ՝ Օրենքով նախատեսված երեք տարվա ընթացքում հիմնավորելու ապօրինի ծագում ունեցող գույքի առկայությունը և համապատասխան պահանջ ներկայացնել դատարան:** Իրավասու մարմինն ազատ է հայցի հիմքի և առարկայի փոփոխությամբ նոր պահանջ ներկայացնելու այն գույքի նկատմամբ, որն ուսումնասիրության առարկա է հանդիսացել, սակայն դրա վերաբերյալ օբյեկտիվ պատճառներով պահանջ չի ներկայացվել դատարան: Ուսումնասիրված գույքի նկատմամբ դատարան պահանջ չներկայացնելը կարող է տարբեր օբյեկտիվ պատճառներ ունենալ՝ սկսած գույքով շահագրգռված անձի կողմից այնպիսի դիրքորոշումներ և ապացույցներ ներկայացնելուց, որոնք մինչև ապացույցների բեռի բաշխման մասին որոշում կայացնելը հերքվում են, վերջացրած այն հանգամանքով, որ կողմն առհասարակ դիրքորոշում չի ներկայացնում, և նախնական դատական նիստի ընթացքում՝ պատասխանողի, փորձագետի և դատավարության այլ մասնակիցների դիրքորոշումներից հետո, անհրաժեշտություն է առաջանում վերանայել սկզբնական նյութաիրավական պահանջը և ներառել այն գույքը, որն ուսումնասիրության առարկա է հանդիսացել, սակայն որի նկատմամբ պահանջ չի ներկայացվել (*numerus apertus*): Այս պատճառները չպետք է փոփոխեն Օրենքով պահպանվող շահը (տե՛ս վերը՝ 4.15.-4.18.-րդ կետերը), որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է, իսկ փոփոխվելու դեպքում դատարանը պետք է մերժի համապատասխան միջնորդությունը՝ Օրենսգրքի 170-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով (տե՛ս վերը՝ 4.27.-րդ կետը): Բոլոր դեպքերում իրավասու մարմինը պետք է մատնացույց անի այն օբյեկտիվ պատճառները, որոնցով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել փոփոխելու հայցի հիմքն ու առարկան: Այսինքն՝ դատարանները պետք է պարզեն, թե ինչ հանգամանքներով են պայմանավորված հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը: Վճռաբեկ դատարանը հավելում է, որ անգամ այս դեպքում իրավասու մարմնի՝ ուսումնասիրված գույքի նկատմամբ պահանջ ներկայացնելու իրավունքը սահմանափակված է Օրենսգրքի 170-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետով, և իրավասու մարմինը պարտավոր է գործել պատշաճ ջանասիրությամբ նման միջնորդություն ներկայացնելիս, իսկ

[35] Տե՛ս Օրենքի 13-րդ հոդվածը:
[36] Տե՛ս Օրենքի 14-րդ հոդվածը:
[37] Տե՛ս Օրենքի 15-րդ հոդվածը:

դատարանները թույլ չտան այնպիսի իրավիճակների առաջացում, երբ սուբյեկտիվ պատճառներով ներկայացվում են բազմաթիվ նման միջնորդություններ, որոնց արդյունքում փոփոխվում է Օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով ի սկզբանե հարուցվել է հայցը:

4.38. Գալով Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասին (տե՛ս վերը՝ 4.29.-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով վերը՝ 4.33.-րդ կետում նշված՝ Վճռաբեկ դատարանի կողմից նախկինում արտահայտված դիրքորոշումը, ըստ որի՝ իրավասու մարմինն ազատ է ինչպես հայցադիմումով, այնպես էլ հետագայում՝ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ հայցի հիմքի և առարկայի փոփոխության շրջանակներում ներկայացնելու ցանկացած պահանջ, **<u>որը բխում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջից</u>**, հարկ է համարում ավելացնել, որ **<u>նշված նորմը վերաբերում է ոչ թե ինքնուրույն նոր պահանջին, այլ արդեն իսկ գոյություն ունեցող ու հայցի առարկա կազմող պահանջի բավարարմանն ուղղված պահանջին</u>**: Եթե իրավասու մարմինը չի կարողանում ցույց տալ, թե որքանո՞վ է երկրորդական պահանջը կապված հիմնական պահանջի հետ, ապա այդ միջնորդությունը ենթակա է մերժման: Նշվածից էլ հետևում է, որ Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասում նշված՝ «*Սույն մասով նախատեսված պահանջների համար չեն գործում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով կամ այլ օրենքներով նախատեսված հայցային վաղեմության ժամկետները*» **կանոնը վերաբերում է ոչ թե հիմնական պահանջին, այլ երկրորդական պահանջին, որն ուղղված է հիմնական պահանջի բավարարմանը**:

4.39. Ընդ որում, Վճռաբեկ դատարանը նկատում է, որ օրենսդիրն Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով, թեև ածանցյալ պահանջների նկատմամբ չի տարածել ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կամ այլ օրենքներով նախատեսված հայցային վաղեմության ժամկետները, սակայն այն չի ազատել Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում նախատեսված ժամկետներից, ուստի նմանատիպ ածանցյալ պահանջները պետք է ներկայացվեն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված կարգով որոշված ժամկետներում ծագած հարաբերությունների առնչությամբ:

4.40. Ամփոփելով, Վճռաբեկ դատարանը, վերը՝ 4.1.-րդ կետի Բ) ենթակետում առաջ քաշված հարցադրման շրջանակում, արձանագրում է. **իրավասու մարմինը հայցի հիմքի և առարկայի փոփոխության շրջանակում չի կարող պահանջ ներկայացնել այնպիսի գույքի նկատմամբ, որն ուսումնասիրության առարկա չի դարձել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում: Այն գույքը, որը եռամյա ժամկետի ընթացքում ուսումնասիրության առարկա է դարձել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում, սակայն իրավասու մարմինն օբյեկտիվ պատճառներով դրա վերաբերյալ պահանջ չի ներկայացրել դատարան, ապա նախնական դատական նիստի ընթացքում՝ մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացվելը, կարող է հայցի հիմքի և առարկայի փոփոխության շրջանակներում ավելացնել իր պահանջը՝ <u>ցույց տալով այն օբյեկտիվ պատճառները, որոնցով պայմանավորված ներկայացվում է նման</u>**

<u>միջնորդությունը, իսկ նման պատճառներ ցույց չտալու դեպքում միջնորդությունն ենթակա է մերժման</u>: Միաժամանակ, Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ հայցային վաղեմության ժամկետների չտարածման կանոնը վերաբերում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հիմնական պահանջին (պահանջներին) ուղղված ածանցյալ պահանջներին: Այլ կերպ ասած՝ ածանցյալ պահանջների համար չեն գործում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով կամ այլ օրենքներով նախատեսված հայցային վաղեմության ժամկետները, սակայն այդպիսի պահանջները կարող են ներկայացվել միայն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված կարգով որոշված ժամկետներում ծագած հարաբերությունների առնչությամբ:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

4.41. Կիրառելով վերը նշված դիրքորոշումները սույն գործի փաստերի նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով ստորադաս դատարանների արտահայտած իրավական դիրքորոշումները, նախ հարկ է համարում անդրադառնալ այն վիճելի հարցին, որ ուսումնասիրության համար Իրավասու մարմնին տրված եռամյա ժամկետը հայցային վաղեմության ժամկետ չէ, և դրա բացթողնման հետևանքը պարզապես հավասարեցվում է հայցային վաղեմության ժամկետի բացթողնման բացասական հետևանքներին, իսկ եթե կիրառելի են հայցային վաղեմության ժամկետները, ապա դրանք կարող են հաշվարկվել միայն ուսումնասիրության ընթացքում կազմված եզրակացությունից սկսած (տե՛ս վերը՝ 2.2.-2.3.-րդ, 2.6.-րդ կետերը):

4.42. Վիճելի այս փաստարկի վերաբերյալ Դատարանն արձանագրել է. «(…) *Օրենքի 8-րդ հոդվածը պետք է դիտարկել որպես ինչպես ուսումնասիրության առավելագույն տևողությունը սահմանող (1-ին մաս), այնպես էլ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջների նկատմամբ կիրառելի հայցային վաղեմության ժամկետ սահմանող (2-րդ մաս) իրավական կարգավորում: Թեև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իմաստով հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը, սակայն նման սահմանումը հիմք չէ հանգելու հետևության, որ Օրենքի 8-րդ հոդվածով սահմանված ժամկետը հայցային վաղեմության ժամկետ չի համարվում: Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետի խախտմամբ ներկայացված հայցը համարվում է հայցային վաղեմության ժամկետի բացթողումով ներկայացված, (…) այն է՝ ուսումնասիրության առավելագույն տևողության ժամկետից ուշ ներկայացված հայցը կարող է գործին մասնակցող անձի դիմումի հիման վրա մերժվել՝ հայցային վաղեմության ժամկետի խախտմամբ ներկայացված լինելու հիմքով: Նշվածից հետևում է, որ օրենսդիրը Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ուսումնասիրության առավելագույն տևողությունը համարել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի նկատմամբ կիրառելի հայցային վաղեմության ժամկետ (…):*

Վերը վկայակոչված իրավական կարգավորումների վերլուծությունից հետևում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով հայցային վաղեմության ժամկետը ուղղակիորեն կապվում է ուսումնասիրության փուլողության հետ, այսինքն՝ այս գործերով հայցային վաղեմության ժամկետը սկսում է հոսել ուսումնասիրություն սկսելու հաջորդ օրվանից, և հայցադիմումը համարվում է հայցային վաղեմության ժամկետի պահպանմամբ ներկայացված, եթե այն օրենքով սահմանված կարգի պահպանմամբ ներկայացվել է ուսումնասիրության փուլողության ընթացքում[38]»:

4.43. Իր հերթին, Վերաքննիչ դատարանը, բացահայտելով Օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված կարգավորումների բովանդակությունը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հայցային վաղեմության ինստիտուտի հետ դրանց հարաբերակցությունը, համաձայնել է Դատարանի վերոնշյալ դիրքորոշման հետ՝ միևնույն ժամանակ նշելով, որ. «(...) *հիմնվելով Օրենքի 8-րդ հոդվածի կարգավորումներին, արձանագրում է, որ օրենսդիրն այս կարգավորմամբ, ըստ էության, Օրենքի հիման վրա կանխորոշել է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի մասին հայցադիմումի նկատմամբ հայցային վաղեմության բացասական հետևանքները կիրառելի են, միևնույն ժամանակ, Օրենքի 20-րդ հոդվածով սահմանել է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հիմնական պահանջից զատ այլ պահանջների նկատմամբ հայցային վաղեմություն կիրառելի չէ: (...) մասնավորապես՝ քանի որ Օրենքի 8-րդ հոդվածով սահմանված է որոշակի ժամկետում հայց չհարուցելու հայցային վաղեմության բացասական հետևանք, ապա դրա բացասական հետևանքը չի կարող սահմանափակվել հայցվորին կաշկանդելով միայն, ինչպես պնդում է Բողոքաբերը, և այն անխուսափելիորեն պետք է հանգեցնի իրավունքի պաշտպանության սահմանափակման՝ ի օգուտ այն անձի, ում գույքի վերաբերյալ Օրենքով սահմանված ժամկետի բացթողնմամբ ներկայացված պահանջի մասով կիրառվելու է հայցային վաղեմության Օրենքով սահմանված բացասական հետևանքը: (...) Վերաքննիչ դատարանի ընկալմամբ, Օրենքի 8-րդ հոդվածով սահմանված կարգավորումը պետք է ազդակ լինի պետության անունից ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցապահանջ ներկայացնողի համար ընդունելու այն օրինաչափությունը, որ եթե իր պահանջի նկատմամբ օրենսդիրը սահմանում է հայցային վաղեմության բացասական հետևանքներ, ապա որպես հայցի իրավատեր պահանջ ներկայացնելիս Օրենքով կաշկանդված է հայցային վաղեմության ժամկետով, ուստի ապօրինի ծագում ունեցող կոնկրետ գույքի վերաբերյալ պահանջները պետք է ներկայացնի Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասում նշված ժամկետում: (...) Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը համաձայն չէ Բողոքաբերի այն դիտարկման հետ, որ Օրենքի 8-րդ հոդվածով սահմանված ժամկետը հայցային վաղեմության ժամկետ չէ, (...) և դրա բացթողնման հետևանքը պարզապես հավասարեցվում է հայցային վաղեմության ժամկետի բացթողնման հետևանքին: Ավելին՝ նման մոտեցումն առհասարակ չի բխում հայցային վաղեմության ինստիտուտի բովանդակությունից և նպատակներից, քանի որ հայցային վաղեմության բացասական հետևանքը չի կարող վրա հասնել հայցային վաղեմության ժամկետից անջատ՝ դրանից*

[38] Տե՛ս Դատարանի 29.01.2025 թվականի վճռի (այսուհետ՝ Վճիռ) 11-րդ էջը:

անկախ (…): (…) Նույն պատճառաբանությամբ ընդունելի չէ նաև Բողոքաբերի մոտեցումն այն մասին, որ օրենսդիրը, որպեսզի կաշկանդի իրավասու մարմնին, սահմանել է հայցի ներկայացման ժամկետ՝ հավասար ուսումնասիրության ժամկետին (…): (…) միայն իրավասու մարմնին կաշկանդելու ներկայացրած մոտեցումը չի բխում այս վարույթում կողմերի իրավահավասարության, մրցակցության և իրավունքների իրացման ողջամիտ հավասարակշռությունն ապահովելու սկզբունքներից, և օրենսդիրը Օրենքի 8-րդ հոդվածով ոչ թե փաստում է ժամկետանց հայցի կարգավիճակի մասին, այլ փաստում է սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացված հայցի՝ հայցային վաղեմության ժամկետի բացթողումով ներկայացված լինելու մասին: (…) Վերաքննիչ դատարանի համոզմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված՝ հայցային վաղեմության ժամկետների հաշվարկի և հայցային վաղեմության ժամկետի ընդհատման կանոններն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում կիրառելի չեն (…): Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Օրենքի 8-րդ հոդվածի կարգավորումը հայցային վաղեմության ժամկետի լրանալը չի պայմանավորում իրավունքի խախտման մասին իմանալու պահով, այդ թվում՝ իրավունքի խախտման մասին իմանալու հնարավորությամբ կամ այդ մասին իմանալու պարտականությամբ, այն, ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի բազմաթիվ դեպքերում (օրինակ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդված), հայցային վաղեմություն կիրառելը պայմանավորում է իրավաբանական բնույթի փաստերով՝ ուսումնասիրություն սկսելով, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին հայցադիմում կամ հետագայում այն լրացնելու միջոցով նոր գույքի մասին նյութաիրավական նոր պահանջ ներկայացնելով և այս երկու դատավարական գործողությունների փևողությամբ (այն պետք է չգերազանցի 3 տարին): Վերոգրյալի հիման վրա ևս Վերաքննիչ դատարանը փաստում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված՝ հայցային վաղեմության հաշվարկի ընդհանուր կանոնները կիրառելի չեն (…)[39]»:

4.44. Վճռաբեկ դատարանը, հիմքում ունենալով վերը՝ Ա) բաժնում արտահայտած իրավական դիրքորոշումները (մասնավորապես՝ տե՛ս վերը՝ 4.15.-րդ, 4.21.-րդ, 4.23.-րդ կետերը), առ այն, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հայցային վաղեմության կանոններն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման իրավահարաբերությունների նկատմամբ տարածվում են այնքանով, որքանով դրանք կիրառելի են այդ վարույթի նկատմամբ, իսկ Օրենքի 8-րդ հոդվածում նշված ժամկետը հանդիսանում է իրավական որոշակիության սկզբունքին համապատասխան՝ անձանց պաշտպանության միջոց, և ուսումնասիրության համար առավելագույնը երեք տարի ժամկետն իր մեջ ներառում է իրավասու մարմնի կողմից այդ ժամկետում սահմանված կարգով դատարան հայց ներկայացնելը, որի հաշվարկը սկսում է իրավասու մարմնի կողմից ուսումնասիրություն սկսելու վերաբերյալ որոշման կայացմամբ, հետևաբար այդ ժամկետի խախտմամբ հայց ներկայացնելիս հայցը համարվում է ներկայացված հայցային վաղեմության ժամկետի բացթողումով ու առաջացնում է համապատասխան բացասական հետևանքներ, արձանագրում է, որ ստորադաս դատարաններն ընդհանուր

[39] Տե՛ս Վերաքննիչ դատարանի 07.10.2025 թվականի որոշման (այսուհետ՝ Որոշում) 68-71-րդ, 83-րդ, 85-86-րդ էջերը:

առմամբ եկել են ճիշտ եզրահանգման (տե՛ս վերը՝ 4.41.-4.42.-րդ կետերը), որով հերքվում են Բողոքաբերի փաստարկներն այն մասին, որ Օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված եռամյա ժամկետը հայցային վաղեմության ժամկետ չէ, իսկ հայցային վաղեմության ժամկետ լինելու պարագայում՝ այն պետք է հաշվարկվի միայն ուսումնասիրության ընթացքում կազմված եզրակացությունից սկսած:

4.45. Վերը նշված վերլուծությունները համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանը նախ արձանագրում է, որ **08.10.2020** թվականին Դատախազությունում Սաշա Ժորայի Հակոբյանին պատկանող գույքի առնչությամբ սկսվել է ուսումնասիրություն, 09.09.2022 թվականին սահմանվել է ուսումնասիրվող նոր ժամանակահատված, իսկ **14.03.2023** թվականին Դատախազությունը վերջնական ամփոփել է ուսումնասիրության արդյունքները և որոշել է հայց ներկայացնել Դատարան, որն էլ Դատարան է ներկայացվել **15.03.2023** թվականին (տե՛ս վերը՝ 3.1.-3.2.-րդ, 3.4.-րդ կետերը):

Վերոգրյալից հետևում է, որ ուսումնասիրություն սկսելու մասին որոշումը կայացվել է 08.10.2020 թվականին, իսկ հայցը Դատարան է մուտքագրվել 15.03.2023 թվականին, այսինքն՝ Վճռաբեկ դատարանի վերը նշված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ (տե՛ս վերը՝ 4.21.-րդ, 4.23.-րդ կետերը), հայցը ներկայացվել է հայցային վաղեմության եռամյա ժամկետի պահպանմամբ:

4.46. Հայցը հայցային վաղեմության եռամյա ժամկետի պահպանմամբ ներկայացված լինելու վերաբերյալ իրավաչափ եզրահանգման են եկել ստորադաս դատարանները՝ ըստ էության արձանագրելով, որ Բողոքաբերի կողմից սկզբնական հայցի մասով պահպանվել է հայցային վաղեմության եռամյա ժամկետը[40]:

4.47. Հաջորդիվ, Վճռաբեկ դատարանը ստորադաս դատարանների իրավական դիրքորոշումների հաշվառմամբ անդրադառնում է Բողոքաբերի այն փաստարկներին, որ այն դեպքում, երբ Իրավասու մարմինն ուսումնասիրության համար սահմանված ժամկետում պատշաճ հայց հարուցելուց հետո հայցի առարկան և (կամ) հիմքը փոփոխելու միջոցով ներկայացնում է հայցադիմումի մեջ չներառված նոր պահանջ, ապա դրա նկատմամբ չեն տարածվում հայցային վաղեմության կանոնները (տե՛ս վերը՝ 2.4.-2.5.-րդ կետերը):

4.48. Ստորադաս դատարաններն այս հարցի շուրջ հայտնել են հետևյալ դիրքորոշումները և հանգել հետևյալ եզրահանգումներին: Մասնավորապես՝ Դատարանը նշել է. *«Այդուհանդերձ, եթե հայցվորը, դատավարության ընթացքում օգտվելով իր դատավարական իրավունքներից, ներկայացնում է հայցի հիմքը և առարկան լրացնելու կամ փոփոխելու և նոր պատասխանող ներգրավելու միջնորդություններ, և այդ միջնորդությունները բավարարվում են, ապա ծագում է նոր պատասխանողի նկատմամբ քննվող որակապես նոր հայց՝ սկզբնական հայցից թե՛ սուբյեկտային, թե՛ օբյեկտային կազմով տարբերվող, այսինքն՝ հարուցվում է նոր՝ սկզբնական հայցադիմումով հայցի առարկայում չընդգրկված գույքի բռնագանձման հայց նոր պատասխանողի դեմ, ում դեմ*

[40] Տե՛ս Վճռի 14-րդ էջը և Որոշման 111-րդ էջը:

(իր անունով գրանցված գույքերի առնչությամբ) որևէ պահանջ ներկայացված չի եղել հայցադիմումով: Նման դեպքում, եթե նոր պատասխանողի և հայցի հիմքի և/կամ առարկայի փոփոխությունը կատարվել է Օրենքի 8-րդ հոդվածով սահմանված հայցային վաղեմության ժամկետի (ուսումնասիրության եռամյա ժամկետ) ավարտից հետո, ապա այդ հայցապահանջի նկատմամբ Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով կիրառելի են հայցային վաղեմության ժամկետի խախտման հետևանքները, և նման պայմաններում հայցային վաղեմության ժամկետի ընդհատման ընթացակարգը չի կարող կիրառելի լինել: Տվյալ դեպքում, (...) Անդրանիկ Սաշայի Հակոբյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության որպես ապօրինի ծագում ունեցող գույք ▪. ▪▪▪▪▪, ▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪ ▪▪▪., ▪▪▪ ▪▪▪▪▪▪▪▪▪, ▪▪▪ ▪▪[41] անշարժ գույքի Անդրանիկ Հակոբյանի բաժինն ամբողջությամբ, իսկ անհնարինության դեպքում միջին շուկայական արժեքը բռնագանձելու պահանջի նկատմամբ հայցային վաղեմության ժամկետը սկսել է հոսել 09.10.2020 թվականից (...): Ըստ այդմ, վերոնշյալ մասով հայցը կարող էր ներայացվել մինչև 09.10.2023 թվականը, մինչդեռ այն ներկայացվել է 22.10.2024 թվականին՝ հայցի հիմքի և առարկայի փոփոխություն թույլատրելու և նոր պատասխանողներ ներգրավելու միջնորդություններով: Հետևաբար, Դատարանն արձանագրում է, որ (...) պահանջը ներկայացվել է Օրենքի 8-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվող հայցային վաղեմության ժամկետի խախտմամբ, ուստի այդ հիմքով հայցն այդ պահանջների մասով ենթակա է մերժման[42]»:

4.49. Վերաքննիչ դատարանը, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին հայցի առարկայի լրացմամբ ներկայացված պահանջների բովանդակությունն ու դրանցից յուրաքանչյուրի նկատմամբ հայցային վաղեմության կիրառելու առանձնահատկությունները հաշվի առնելով, Որոշմամբ համաձայնել է Դատարանի վերոնշյալ դիրքորոշման հետ և արձանագրել է որ. *«(...)*

- Բոլոր այն դեպքերում, երբ ուսումնասիրության ընթացքում գույքը համարվել է օրինական, սակայն հետագայում այն հայցվորի կողմից որակվել է որպես ապօրինի կամ համարվել է ապօրինի, սակայն այդ գույքի մասով հայցադիմումով նյութաիրավական պահանջ չի ներկայացվել և այդպիսի նյութաիրավական նոր պահանջ ներկայացվել է գործի քննության ընթացքում, ապա համարվում է, որ այդ պահանջը ներկայացվել է առաջին անգամ և այն անկախ է անձի կամ անձանց դեմ ապօրինի ծագում ունեցող այլ գույքերի մասով հայցադիմումով ներկայացված պահանջներից, ըստ այդմ՝ այն ենթադրում է այդ գույքի օրինականության սպրուգման առանձին գործընթաց և այդ կապակցությամբ առանձին քննություն՝ առանձին կարգով ապացուցման պարտականության բաշխման և այլ դատավարական գործողություններով հանդերձ

- Բոլոր այն դեպքերում, երբ ուսումնասիրության արդյունքում անձին պատկանող որևէ գույք իրավասու մարմնի գնահատմամբ համարվել է ապօրինի ծագում ունեցող և հայցադիմումով այդ գույքի վերաբերյալ ներկայացվել է Օրենքից բխող նյութաիրավական որևէ պահանջ, սակայն հետագայում՝ կախված գործի քննության ընթացքից, այդ թվում՝

[41] Հանդիսանում է անձնական տվյալ:
[42] Տե՛ս Վճռի 11-12-րդ, 14-15-րդ էջերը:

գործի քննության ընթացքում պարզված, ձեռք բերված փաստերից ու հանգամանքներից կամ դրանք հաստատող փաստական տեղեկություններից հայցվորը, օգտվելով իր տնօրինչականության սկզբունքից բխող հայեցողական իրավունքից, կատարել է հայցի առարկայի փոփոխություն՝ ներկայացնելով գույքի բնեղենով բռնագանձման պահանջ կամ գույքի շուկայական արժեքը բռնագանձելու պահանջ կամ գույքի ձեռքբերման արժեքը բռնագանձելու պահանջ կամ բոլոր պահանջները միաժամանակ ներկայացրել է, ապա պետք է համարել, որ դա ընդամենը Օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ, 4.1-րդ կամ 5-րդ մասերով սահմանված կարգավորումներից բխող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման արդեն իսկ հայցադիմումով ներկայացված պահանջի ճշգրտման միջոցով կատարված ձևափոխում է, որը պետք է համարվի որպես բովանդակային առումով ապօրինի ծագում ունեցող նույն գույքի բռնագանձման պահանջ, որի բավարարումն օրենսդիրն Օրենքի հիշյալ նորմերի ուժով պայմանավորում է այնպիսի պայմաններով, որոնց առկայությունը կամ բացակայությունը կարող է հաստատվել գործի քննության ընթացքում:

(…) Սույն գործի փաստերի համաձայն՝ 22.10.2024 թվականին Հայցվորի անունից Դատարան է մուտքագրվել միջնորդություն՝ հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրելու և նոր պատասխանողներ ներգրավելու վերաբերյալ, որոնք բավարարվել են Դատարանի համապատասխանաբար 08.11.2024 թվականի և 11.11.2024 թվականի որոշումներով: (…) սույն գործով ներկայացված միջնորդություններով, ըստ էության, փոփոխվել են և՛ հայցադիմումի առարկան, և՛ փաստական հիմքը: (…) «▪▪▪▪▪▪▪, ▪. ▪▪▪▪▪, ▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪ ▪▪▪., ▪▪▪ ▪▪▪▪▪▪▪▪ ▪▪▪ ▪▪[43]» հասցեներում գտնվող անշարժ գույքերի մասով ամբողջությամբ փոփոխվել են՝ հայցադիմումի հիմքում սկզբնապես դրված փաստերը այլ փաստերով փոխարինելու եղանակով: Ինչ վերաբերում է հայցի առարկայի փոփոխությանը, ապա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սկզբնապես ներկայացված հայցադիմումի առարկան փոփոխվել է հայցվորի կողմից պատասխանողներին ուղղված նյութաիրավական պահանջն այլ պահանջներով լրացնելու եղանակով: Մասնավորապես՝ (…) Հայցադիմումի առարկայի փոփոխման երկրորդ դրվագը դրսևորվել է նրանով, որ եթե սկզբնապես ներկայացված հայցադիմումով առհասարակ բացակայել է «▪▪▪▪▪▪▪, ▪. ▪▪▪▪▪, ▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪ ▪▪▪., ▪▪▪ ▪▪▪▪▪▪▪▪ ▪▪▪ ▪▪[44]» հասցեում գտնվող անշարժ գույքի որևէ ձևով բռնագանձման պահանջը, ապա հայցի առարկայի փոփոխությունից հետո պատասխանողներին ուղղվել է նոր նյութաիրավական պահանջ (…): (…) Տվյալ դեպքում, քանի որ «▪▪▪▪▪▪▪, ▪. ▪▪▪▪▪, ▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪ ▪▪▪., ▪▪▪ ▪▪▪▪▪▪▪▪ ▪▪▪ ▪▪[45]» անշարժ գույքի մասով Օրենքից բխող նյութաիրավական որևէ պահանջ հայցադիմումով առհասարակ չի ներկայացվել, և, փաստորեն, մինչ հայցի առարկայի լրացման մասին միջնորդություն ներկայացնելն անձին պատկանող այդ գույքի մասով գործի քննություն չի իրականացվել, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ հետագայում հայցի առարկայում չներառված այդ գույքի մասով ՀՀ քաղաքացիական դատավարության

[43] Հանդիսանում է անձնական տվյալ:
[44] Հանդիսանում է անձնական տվյալ:
[45] Հանդիսանում է անձնական տվյալ:

օրենսգրքի 170-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացված լրացուցիչ պահանջը պետք է համարել նոր գույքի մասով նյութաիրավական նոր հայցապահանջի ներկայացում՝ իր հետևանքներով հանդերձ, և քանի որ Օրենքի 8-րդ հոդվածի պահանջը Վերաքննիչ դատարանն իր վերը շարադրված վերլուծությունների հիման վրա համարել է կիրառելի նաև հայցի առարկայի լրացված՝ նոր գույքի բռնագանձման պահանջի նկատմամբ, ապա Վերաքննիչ դատարանը եկել է այն համոզման, որ ▪▪▪▪▪▪, ▪. ▪▪▪▪▪, ▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪ ▪▪▪., ▪▪▪ ▪▪▪▪▪▪▪▪ ▪▪▪ ▪▪[46] անշարժ գույքի բռնագանձման լրացված պահանջների մասով Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հայցային վաղեմության բացասական հետևանքները կիրառելի են, ուստի այս մասով միջնորդությունը բավարարելու մասին Դատարանի վճիռն իրավաչափ է և այդ մասով այն բեկանման ենթակա չէ[47]»:

4.50. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների այս հարցի շուրջ իրավական դիրքորոշումները և եզրահանգումները, ըստ էության, մասնակի են համահունչ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներին ու եզրահանգումներին՝ մասնավորապես առ այն, որ իրավասու մարմինը հայցի հիմքի և առարկայի փոփոխության շրջանակում կարող է պահանջ ներկայացնել այն գույքի նկատմամբ, որն ուսումնասիրության առարկա է դարձել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում, իսկ Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով՝ հայցային վաղեմության ժամկետների չտարածման կանոնը վերաբերում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հիմնական պահանջին (պահանջներին) ուղղված ածանցյալ պահանջներին (մասնավորապես՝ տե՛ս վերը՝ 4.36.-րդ, 4.39.-րդ կետերը):

4.51. Ինչ վերաբերում է ստորադաս դատարանների այն դիրքորոշումներին, որ բոլոր այն դեպքերում, երբ ուսումնասիրության ընթացքում գույքը համարվել է օրինական, սակայն հետագայում այն հայցվորի կողմից համարվել է ապօրինի, սակայն այդ գույքի մասով հայցադիմումով նյութաիրավական պահանջ չի ներկայացվել և այդպիսի նյութաիրավական նոր պահանջ ներկայացվել է գործի քննության ընթացքում, ապա Օրենքի 8-րդ հոդվածի պահանջը կիրառելի է նաև հայցի առարկայի լրացված՝ նոր գույքի բռնագանձման պահանջի նկատմամբ, ապա այդ դիրքորոշումները չեն բխում Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներից ու եզրահանգումներից (մասնավորապես՝ տե՛ս վերը՝ 4.37.-րդ, 4.40.-րդ կետերը)՝ նկատի ունենալով, որ այն գույքը, որը եռամյա ժամկետի ընթացքում ուսումնասիրության առարկա է դարձել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում, սակայն իրավասու մարմինն օբյեկտիվ պատճառներով դրա վերաբերյալ պահանջ չի ներկայացրել դատարան, ապա հայցվորը նախնական դատական նիստի ընթացքում՝ մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացվելը, կարող է հայցի հիմքի և առարկայի փոփոխության շրջանակներում ավելացնել իր պահանջը՝ ցույց տալով այն օբյեկտիվ պատճառները, որոնցով պայմանավորված ներկայացվում է նման միջնորդությունը: Միևնույն ժամանակ

[46] Հանդիսանում է անձնական տվյալ:
[47] Տե՛ս Որոշման 73-74-րդ, 109-111-րդ, 114-115-րդ, 123-րդ էջերը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ևս մեկ անգամ արձանագրել, որ տվյալ կանոնը չի գործում այն գույքի նկատմամբ, որն ուսումնասիրության առարկա չի դարձվել:

4.52. Հետևաբար, նման պայմաններում մասնակի են հերքվում Բողոքաբերի այն փաստարկները, որ հայցի առարկան և (կամ) հիմքը փոփոխման միջոցով հայցադիմումի մեջ չներառված նոր պահանջ ներկայացնելիս դրա նկատմամբ չեն տարածվում հայցային վաղեմության կանոնները:

4.53. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատախազությունը, **08.10.2020** թվականին Սաշա Ժորայի Հակոբյանին պատկանող գույքի առնչությամբ ուսումնասիրություն սկսելով և **14.03.2023** թվականին ուսումնասիրության արդյունքները վերջնական ամփոփելով, ▪▪▪▪▪▪, ▪. ▪▪▪▪▪, ▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪ ▪▪▪., ▪▪▪ ▪▪▪▪▪▪▪▪ ▪▪▪ ▪▪[48] հասցեում գտնվող անշարժ գույքը դիտարկել է որպես օրինական գույք և, **15.03.2023** թվականին դատարան հայց ներկայացնելով, տվյալ գույքի նկատմամբ նյութաիրավական պահանջ չի ներկայացրել ու մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը՝ **22.10.2024** թվականին է ներկայացրել միջնորդությունը, որով, ի թիվս այլնի, հայցի առարկան լրացրել է նաև ▪▪▪▪▪▪, ▪. ▪▪▪▪▪, ▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪ ▪▪▪., ▪▪▪ ▪▪▪▪▪▪▪▪ ▪▪▪ ▪▪[49] հասցեում գտնվող անշարժ գույքի Անդրանիկ Սաշայի Հակոբյանի մասն ամբողջությամբ, իսկ անհնարինության դեպքում միջին շուկայական արժեքը բռնագանձելու պահանջով, որն էլ Դատարանը, քննարկելով ներկայացված միջնորդությունը, **08.11.2024** թվականի որոշմամբ բավարարել է (տե՛ս վերը՝ 1.5.-րդ, 3.4.-3.6.-րդ կետերը): Հետևաբար, նման պայմաններում ստորադաս դատարանները Դատախազության տվյալ պահանջի նկատմամբ չէին կարող կիրառել Օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված հայցային վաղեմության ժամկետի կանոնները:

4.54. Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը բավարար է Օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված լիազորությունը կիրառելու համար: Մասնավորապես, պետք է Վերաքննիչ դատարանի 07.10.2025 թվականի որոշումը՝ ՀՀ գլխավոր դատախազության հայցն ընդդեմ Անդրանիկ Սաշայի Հակոբյանի՝ հօգուտ Հայաստանի Հանրապետության որպես ապօրինի ծագում ունեցող գույք ▪▪▪▪▪▪, ▪. ▪▪▪▪▪, ▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪ ▪▪▪., ▪▪▪ ▪▪▪▪▪▪▪▪ ▪▪▪ ▪▪[50] հասցեի անշարժ գույքի Անդրանիկ Հակոբյանի բաժինն ամբողջությամբ, իսկ անհնարինության դեպքում միջին շուկայական արժեքը բռնագանձելու պահանջի մասով հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով վճիռն անփոփոխ թողնելու մասով բեկանել և գործն այդ մասով ևս ուղարկել ՀՀ հակակոռուպցիոն դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

4.55. Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, սույն գործով Վերաքննիչ դատարանի 07.10.2025 թվականի որոշման մեջ Օրենքի 8-րդ հոդվածի և 20-րդ հոդվածի 3-րդ մասի մեկնաբանությունը համեմատական վերլուծության ենթարկելով թիվ ՀԿԴ/0110/02/24

[48] Հանդիսանում է անձնական տվյալ:
[49] Հանդիսանում է անձնական տվյալ:
[50] Հանդիսանում է անձնական տվյալ:

հակակոռուպցիոն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանի 08.05.2025 թվականի որոշման մեջ նույն նորմերին տրված մեկնաբանության հետ, արձանագրում է, որ Դատախազության կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի քննությամբ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքը հիմնավոր է, սակայն, **հիմք ընդունելով սույն գործով Վճռաբեկ դատարանի կողմից հայտնված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նմանատիպ փաստական հանգամանքներով գործերի քննության ժամանակ վկայակոչված նորմերն անհրաժեշտ է կիրառել սույն որոշմամբ տրված մեկնաբանություններով:**

<u>5.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.</u>

5.1. Օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

5.2. Օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

5.3. Օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

5.4. Նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանը 07.10.2025 թվականին որոշում է կայացրել Դատարանի 29.01.2025 թվականի վճիռը մասնակիորեն բեկանելու և այդ մասով գործը նոր քննության ուղարկելու մասին, և սույն որոշմամբ վճռաբեկ բողոքը մասնակիորեն բավարարելու արդյունքում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության արդյունքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ ու 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի 07.10.2025 թվականի որոշումը՝ ՀՀ գլխավոր դատախազության հայցն ընդդեմ Անդրանիկ Սաշայի Հակոբյանի՝ հօգուտ Հայաստանի Հանրապետության որպես ապօրինի ծագում ունեցող գույք ▪▪▪▪▪▪, ▪. ▪▪▪▪▪, ▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪▪ ▪▪▪., ▪▪▪ ▪▪▪▪▪▪▪▪ ▪▪▪ ▪▪[51] հասցեի անշարժ գույքի Անդրանիկ Հակոբյանի բաժինն ամբողջությամբ, իսկ անհնարինության դեպքում միջին շուկայական արժեքը բռնագանձելու պահանջի մասով հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով վճիռն անփոփոխ թողնելու մասով

[51] Հանդիսանում է անձնական տվյալ:

բեկանել և գործն այդ մասով ևս ուղարկել ՀՀ հակակոռուպցիոն դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող **Ա. ԴԱՎԹՅԱՆ**

Զեկուցող **Գ. ԳՅՈՉԱԼՅԱՆ**

Ա. ԿՈՒՐԵՂՅԱՆ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Լ. ՄԵԼԻՔՋԱՆՅԱՆ